Հաստատված է
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
2026 թվականի հունիսի 30-ի N 5-Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД "ДОРОЖНЫЙ ДЕПАРТАМЕНТ"
"ROAD DEPARTMENT" FUND

ԵՐԵՎԱՆ
2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ 2
ՆԱԽԱԲԱՆ 3
1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 5
2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 14
3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 18
3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2 21
3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ-3 26
3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3 30
3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ՏՐԱՆՇ 4 Քաջարան-Ագարակ ճանապարհահատված 34
3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր 39
3.6 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցման ծրագիր 43
3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ՏՐԱՆՇ 4 Արտաշատ-Սիսիան շուրջ 162 կմ հատվածի վերակառուցման հեռանկարային ծրագիր 47
3.8 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5 Գյումրու շրջանցիկ և Քեթի-Բավրա ճանապարհահատված 48
3.9 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 50
4. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 53
5. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 59
6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 64
7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ 67
8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 75
9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ 76

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ
(2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ)

- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ**
- **Կադաստրի կոմիտեի ղեկավար**
- **ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհաշինության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ (գնումների քաղաքականության ոլորտը համակարգող)**
- **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ (հանրային ներդրումների ոլորտը համակարգող)**
- **Փոխվարչապետի (ենթակառուցվածքների ոլորտը համակարգող) գրասենյակի ղեկավար**
- **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար**
- **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով):**

2025 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցրել են՝

- **Արմեն Զոհրաբյանը (04.09.2024թթ.-08.04.2025թթ.)**
- **Արկադի Չերչինյանը (08.04.2025թ. - առ այսօր)**

ՆԱԽԱԲԱՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Հիմնադրամի հիմնադրի անունից, որպես պետական լիազոր մարմին, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Հիմնադրամը ստեղծվել է վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Հիմնադրամը հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է. ունի իրավաբանական անձի կարգավիճակ:

Հիմնադրամի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

1) հիմնադրի ներդրումը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

4) դրամաշնորհները.

5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որը ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը՝ համաձայն Հիմնադրամի կանոնադրության:

Հիմնադրամի գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որը վարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է խորհրդին:

Ստորև կներկայացվեն 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքներն՝ ըստ ծրագրերի, անդրադարձ կկատարվի ավտոմոբիլային ցանցի զարգացման, նպատակային օգտագործման և պահպանման նպատակով պետական քաղաքականության մշակմանն օժանդակելուն ուղղված գործառույթներին՝ երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում, ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում և այլն, ինչպես նաև կներկայացվի տեղեկատվություն Հիմնադրամի աշխատակազմի, դատական գործերի և հանրությանն իրազեկման վերաբերյալ:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում գրանցել է նշանակալի և ակնհայտ ձեռքբերումներ, վստահ ենք, որ ապագայում կարձանագրենք նոր նվաճումներ և կունենանք արդեն ձևավորված և հաստատում մշակույթ ճանապարհաշինության ոլորտում:

Հաշվետվության մեջ օգտագործվող հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

ԱԶԲ- Ասիական Զարգազման Բանկ

ՎԶԵԲ - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ

ԵՆԲ - Եվրոպական ներդրումային Բանկ

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՀՀՃՄՆԾ - Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր

ՃՏՊ - ճանապարհատրանսպորտային պատահար

ՀՕՏԾ - Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր

ՄԱԿ – Միավորված Ազգերի Կազմակերպություն

1. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ճանապարհաշինության բնագավառում կատարվելիք գնումների դեպքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21001 «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և 21002 «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառումների ապահովման նպատակով սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթներից բխող ստորև նշված աշխատանքները.

Իրականացվել են շուրջ 229 կմ ընդհանուր երկարությամբ շուրջ 41 ճանապարհահատվածների, 12 տրանսպորտային օբյեկտների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գնման հայտերի կազմման և ներկայացման, գնման գործընթացների աջակցման և կազմակերպման, դրանց համար ֆինանսական միջոցների վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման հայտերի կազմման և ներկայացման գործընթացներ:

Հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի մասով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 290 կմ ընդհանուր երկարությամբ թվով 39 ճանապարհահատվածների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման և շուրջ 224 կմ ընդհանուր երկարությամբ թվով 23 ճանապարհահատվածների նախագծերի փորձաքննության ծառայությունների մշտադիտարկման և հանձնման-ընդունման գործընթացներ: Իրականացվել են նաև թվով 9 տրանսպորտային օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներ:

Իրականացվել են նաև շուրջ 203 կմ ընդհանուր երկարությամբ թվով 47 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման հայտերի կազմման, ներկայացման և գնման գործընթացներին աջակցման, թվով 12 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման

աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցույթային գործընթացների աջակցման և կազմակերպման գործընթացներ: Իրականացվել են նաև 284 կմ ընդհանուր երկարությամբ 75 ճանապարհահատվածների և 14 տրանսպորտային օբյեկտի շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար ֆինանսական միջոցների վերաբաշխման, վճարման համաձայնագրերի կնքման համար հայտերի կազմման և ներկայացման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շուրջ 313.2 կմ ընդհանուր երկարությամբ 72 ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների՝ ներառյալ նախորդ տարիներին սկսված և 2025թ տեղափոխված ճանապարհահատվածների հիմնանորոգման, կառուցման և վերակառուցման աշխատանքների մշտադիտարկում, կատարված աշխատանքների գնահատում, կատարված աշխատանքների հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպում և մասնակցում:

Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21001 «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում 2025 թվականի ընթացքում իրականացվել են 253 կմ ընդհանուր երկարությամբ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ, որից 30,3 կմ՝ միջպետական, 91,6 կմ՝ հանրապետական, 131,1 կմ՝ մարզային նշանակության ճանապարհահատվածներ: Ճանապարհահատվածների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքների շրջանակներում հիմնանորոգվել և վերականգնվել են նաև շուրջ 29 կամրջային անցումներ, տեղադրվել են շուրջ 105932 գծ.մ մետաղական արգելապատնեշներ և 8313 ճանապարհային նշաններ:

2025 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում հատկացման և վերաբաշխման գումարը կազմում է 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում հատկացման և վերաբաշխման գումարը կազմում է 55,7 մլրդ դրամ, որն իր մեջ ներառում է նոր նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, նախորդ տարիներին ավարտված, սակայն շինարարական աշխատանքների դիմաց չվճարված պայմանագրերի

ընդհանուր գնի 5 տոկոսի վճարման, նախորդ տարիներից 2025 թվական փոխանցված շինարարական օբյեկտների, ինչպես նաև՝ 2025 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար անհրաժեշտ գումարները:

Վերոնշյալ միջոցառման ապահովման համար 2025 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների փաստացի ծախսը կազմել է 46,2 մլրդ դրամ (82,9 %):

հ/հ	**Օբյեկտի անվանումը**	**2025թ-ին իրականացված Ընդամենը /ԿՄ/**	**Մարզ**
	01. Ճանապարհների հիմնանորոգում, այդ թվում՝	**253,0**	
	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**30,3**	
1	Մ-1, Երևան-Գյումրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 130+100-կմ134+500 հատվածի հիմնանորոգում	4,4	Շիրակ
2	Մ-2, Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման (նախկին՝ Մ-2 ,Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+475-կմ53+150 հատվածի հիմնանորոգում	6,215	Արարատ
3	Մ-2, Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման (նախկին՝ Մ-2 ,Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+600 - կմ98+000 հատվածի հիմնանորոգում	6,4	Վայոց ձոր
4	Մ-2, Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման (նախկին՝ Մ-2 ,Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ՀՀ սահման) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ181+250 - կմ181+750 հատվածի վերակառուցում	0,5	Սյունիք
5	/Մ-2 /-Տաթև-Աղվանի-/Մ-2 /(Սյունիք) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ19+500 հատվածի հիմնանորոգում	8,142	Սյունիք
6	Մ-2,Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման ավտոճանապարհի կմ336+550 - կմ338+350 հատվածի հիմնանորոգում	2	Սյունիք
7	Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ35+535-կմ39+500 հատվածի հիմնանորոգում	0,758	Արագածոտն

8	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ) - Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+236 - կմ6+236 հատվածի (Վանաձոր քաղաքի հատված) հիմնանորոգում	0,4	Լոռի
9	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ79+060-կմ80+590 հատվածի վերակառուցում	1,53	Գեղարքունիք
	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**91,6**	
1	Հ-3, Երևան (Ջրաշխարհ, Մ-4-ի հետ հատման տեղ)-Գառնի – Գեղարդի վանք հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ10+770-կմ27+500 (բացառությամբ սողանքային տեղամասերի) հատվածի հիմնանորոգում	13,8	Կոտայք
2	Հ-10. /Հ-8/ (Ոսկետափ) - Վեդի - Լանջառ - /Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+450 - կմ9+250 հատվածի հիմնանորոգում	1,85	Արարատ
3	Հ-15, /Մ-5/(Նորապատ) -Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ3+000 - կմ13+000 հատվածի հիմնանորոգում	6,1	Արմավիր
4	Հ-15, /Մ-5/(Նորապատ) -Արգավանդ –/Մ-3/ (Վարդանաշեն) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ13+000 - կմ20+000 հատվածի հիմնանորոգում	7	Արմավիր
5	Հ-21, /Հ-75/ - Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ32+700 - կմ41+000 հատվածի հիմնանորոգում	8,3	Արագածոտն
6	Հ-22, /Մ-6/ - Դսեղ – /Հ-70/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 8+000-կմ 13+900 հատվածի հիմնանորոգում	6,191	Լոռի
7	Հ-29,Սևան - Ծաղկունք – Ջովաբեր հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 18+200 հատվածի հիմնորոգում (բացառությամբ կմ 11+000-կմ 12+000 հատվածի)	17,75	Գեղարքունիք, Կոտայք
8	Հ-30, /Մ-4/ - Ճամբարակ- /Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 19-րդ և 51-րդ կմ-ում գտնվող սողանքային տեղամասերում ճանապարհամերձ հողաշերտի բեռնաթափման, ճանապարհի անցանելիության ապահովման միջոցառումների իրականացում	0,55	Գեղարքունիք
9	Հ-31,/Մ-1/ - Վարդաղբյուր – Տաշիր - /Մ-3/ կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգում	5,188	Շիրակ

10	Հ-36, /Մ-4/ (Իջևան) - Նավուր - Բերդ - Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600 - կմ42+100 հատվածի հիմնանորոգում	15,906	Տավուշ
11	Հ-38,/Հ-30/ (Թթուջուր) – /Հ-36/ (Նավուր) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ15+100 հատվածի հիմնանորոգում	4,5	Գեղարքունիք
12	Հ-56,/Մ-3/ - Մուղնի - Օհանավան - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 5+300 հատվածի հիմնանորոգում	0,7	Արագածոտն
13	Հ-64, Բերդ - Արծվաբերդ - Չինարի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ2+700 -կմ9+700 և կմ14+160 - կմ16+400 հատվածների հիմնանորոգում	3,16	Տավուշ
14	Հ-70, Մ-6 – Աթան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ27+500 հատվածի հիմնանորոգում	0,577	Լոռի
	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում՝	**131,1**	
1	S-1-14, /Մ-3/ - Հարթավան - /Հ-4/ ավտոճանապարհի կմ0+000-կմ1+200 հատվածի հիմնանորոգում	1,2	Արագածոտն
2	S-1-25,/Մ-3/ (Աշտարակ) – Փարպի - Ղազարավան տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+000 և կմ6+000 - կմ13+500 հատվածների հիմնանորոգում	8,2	Արագածոտն
3	S-1-33, Կոշ (S-1-8) - Վերին Սասունիկ -Լեռնարոտ ավտոճանապարհի կմ0+000 - կմ9+500 հատվածի հիմնանորոգում	8,544	Արագածոտն
4	S-1-34,(S-1-33) – Ավան - Խնուսիկ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ2+200 հատվածի հիմնանորոգում	0,6	Արագածոտն
5	S-1-35, /Հ-81/ (Հացաշեն) - Սորիկ ավտոճանապարհի կմ0+000 - կմ5+100 հատվածի հիմնանորոգում	0,6	Արագածոտն
6	/S-1-21/(Եղիպատրուշ բնակավայր) ճանապարհից դեպի «Մայլեռ» լեռնային հանգստավայր տանող 3 կմ երկարությամբ և 8 մետր լայնությամբ երթևեկելի մասով ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցում	3	Արագածոտն
7	Զարինջա - Ձիթհանքով ավտոճանապարհի 4.3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում	4,1	Արագածոտն, Շիրակ
8	S-2-50, Հ-10/(Վանաշեն)-Այգավան-Եղեգնավան - /Հ-11/ մարզային նշնակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ2+500 հատվածի հիմնանորոգում	2,5	Արարատ
9	S-3-8,/Մ-5/-Մայիսյան/S-3-47/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 0+800 հատվածի հիմնանորոգում	0,8	Արմավիր

10	Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16) ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+300, կմ3+000-կմ4+200 և կմ4+700-կմ6+200 հատվածների հիմնանորոգում	2,1	Արմավիր
11	Տ-3-14, /Մ-5/-Մրգաշատ-Ալաշկերտ-գ.Արմավիր (Տ-3-16) տեղական նշնակության ավտոճանապարհի կմ6+200 - կմ7+400 հատվածի հիմնանորոգում	1,2	Արմավիր
12	Տ-3-19, Արևիկ(Տ-3-50)-/Հ-15/(Տանձուտ) ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+400 հատվածի հիմնանորոգում	3,4	Արմավիր
13	Տ-3-29, /Մ-5/ (Զվարթնոց թաղամաս) – /Հ-13/ ավտոճանապարհի կմ0+000-կմ4+400 հատվածի հիմնանորոգում	4,4	Արմավիր
14	Տ-3-41, /Մ-3/(Լուսագյուղ)-Ջրառատ ավտոճանապարհի կմ0+500-կմ2+600 հատվածի հիմնանորոգում	2,1	Արմավիր
15	Տ-3-42, /Մ-3/ Ջրարբի – Գայ- /Մ-3/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+700-կմ 2+700 հատվածի հիմնանորոգում	1,9	Արմավիր
16	Տ-4-13,/Հ-39/ (Գավառ) – Գանձակ – Սարուխան – Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում	3,8	Գեղարքունիք
17	Տ-4-63, /Հ-7/ - Ջիլ մարզային նշանակության ավտոճանապարհի և նորակառույց դպրոց տանող ճանապարհահատվածի հիմնանորոգում	3,1	Գեղարքունիք
18	ՀՀ Գեղարքունիքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան, Գևորգ Չիրոյան և Սայաթ Նովա խաչմերուկից մինչև Ն. Գետաշեն բնակավայրի թիվ 2 միջնակարգ դպրոցի խաչմերուկ ավտոճանապարհի հիմնանորոգում	3,45	Գեղարքունիք
19	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Բերդկունքի կենտրոնական փողոցի մի հատվածի ասֆալտապատում	0,71	Գեղարքունիք
20	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Երևանյան և Մյասնիկյան փողոցների ասֆալտապատում	1,05	Գեղարքունիք
21	Տ-5-3,/Մ-7/ (Շիրակամուտ) -Գեղասար - /Տ-5-7/ ավտոմոբիլային ճանապարհի կմ0+000 - կմ 1+400 հատվածի հիմնանորոգում	1,4	Լոռի
22	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի հիմնանորոգում	2,46	Լոռի
23	Տ-5-51, /Մ-3/ - Միխայլովկա - /Մ-3/ կմ0+000 – կմ2+000 մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգում	2	Լոռի

24	Տ-5-96, /Մ-3/(Տաշիր) – Մեծավան – Ձյունաշող (Տ-5-27) ավտոճանապարհի կմ0+000 – կմ8+500 հատվածի հիմնանորոգում	4	Լոռի
25	ՀՀ Լոռու մարզի դեպի «Թեժ լեռ» հանգստյան տուն տանող ճանապարհի հիմնանորոգում	1,285	Լոռի
26	Տ-6-18,/Տ-6-44/ - Երևանի սահման տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ 1+100 հատվածի հիմնանորոգում	1,05	Կոտայք
27	Տ-6-29,Երևան (Բագրևանդի փող.) – Ձորաղբյուր (Տ-6-42) ավտոճանապարհի կմ 0+000-կմ 5+200 հատվածի հիմնանորոգում	5,2	Կոտայք
28	Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի դեպի Կաքավաձոր թաղամաս տանող ճանապարհի հիմնանորոգում	3,382	Կոտայք
29	ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի հանրապետական նշանակության «Ամրոց» պատմության և մշակույթի անշարժ հուշարձան տանող ճանապարհի նորոգում	0,62	Կոտայք
30	Տ-7-48, Գյումրի(Տ-7-58)-Արևիկ-Այգեբաց-Վարդաքար- /Հ-21/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ10+440 հատվածի հիմնանորոգում	6	Շիրակ
31	Տ-8-13, /Մ-12/ - Վերիշեն - Խոզնավար ավտոճանապարհի կմ0+000 - կմ18+300 հատվածի հիմնանորոգում	16,3	Սյունիք
32	Տ-8-42,/Հ-45/ (Սիսիան) – Աշոտավան – Թասիկ - Արևիս տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ10+000 հատվածի հիմնանորոգում	10,21	Սյունիք
33	Տ-8-56, /Մ-2/ - Հարժիս ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+000 հատվածի հիմնանորոգում	0,25	Սյունիք
34	Տ-8-90,/Մ-2/ - Վաղատին- /Մ-2/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 1+500 հատվածի հիմնանորոգում	1,68	Սյունիք
35	Տ-10-9, /Հ-36/ - Չինչին (Տ-10-38) ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+000 հատվածի հիմնանորոգում	2,9	Տավուշ
36	Հ-36-իջատեղ Նավուր համայնք հատվածի հիմնանորոգում	1,746	Տավուշ
37	/Մ-12/ - Խնձորեսկ - Ներքին Խնձորեսկ ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+100 հատվածի հիմնանորոգում	10,757	Սյունիք
38	Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցում	3,1	Սյունիք

2025 թվականին 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի 21002 «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում իրականացվել են թվով 14 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ, որից 12 տրանսպորտային օբյեկտի (10 կամուրջ, 2 տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, իսկ 1 կամրջի և 1 հատ վերգետնյա հետիոտնային անցման շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է 2026 թվականին:

Նշված միջոցառման շրջանակներում 2025 թվականի համար հատկացման և վերաբաշխման գումարը կազմում է 1,6 մլրդ դրամ, որն իր մեջ ներառում է նոր նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, նախորդ տարիներին ավարտված, սակայն շինարարական աշխատանքների դիմաց չվճարված պայմանագրերի ընդհանուր գնի 5 տոկոսի վճարման, նախորդ տարիներից 2025 թվական փոխանցված շինարարական օբյեկտների, ինչպես նաև՝ 2025 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների համար անհրաժեշտ գումարները:

Վերոնշյալ միջոցառման ապահովման համար 2025 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների փաստացի ծախսը կազմել է 1,1 մլրդ դրամ (68,75%):

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի գործառույթներին առնչվող գրությունները, դիմումները, առաջարկությունները, կազմվել և ներկայացվել են համապատասխան մասնագիտական կարծիքներ և դիրքորոշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային հայտերը, տեխնիկական բնութագրերը և հայտերի գնահատման նպատակով ներկայացվել են մասնագիտական դիրքորոշում:

2025թ.	Նախատեսված	Փաստացի
Հսկողություն, այցելություն	150	163

2. ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում է ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների նկատմամբ:

Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգումն իրենից ներկայացնում է ավտոմոբիլային ճանապարհի պատվածքի մաշված վերին շերտը վերականգնելու, ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների, ինչպես նաև ճանապարհային կահավորանքի շինարարական նորմերով նախատեսված սկզբնական որակական ցուցանիշների ապահովման նպատակով իրականացվող նորոգման աշխատանքներ:

2025 թվականին իրականացվել են 183,5 կմ պետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքներ, որից 47,2 կմ՝ միջպետական, 106,4 կմ՝ հանրապետական, 29,92 կմ՝ տեղական (մարզային) նշանակության:

հ/հ	Օբյեկտի անվանումը	2025թ-ին իրականացված Ընդամենը /ԿՄ/	Մարզ
	Միջին նորոգում	**183,5**	
1	Հ-33, /Մ-3/(Ստեփանավան) Ագարակ-Յաղդան-/Հ-35/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ8+110-կմ23+873 հատվածի միջին նորոգում	15,763	Լոռի
2	Հ-35, /Մ/6/ - Օձուն - Արևածագ - /Հ-24/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ14+800 հատվածի միջին նորոգում	14,8	Լոռի
3	Հ-82, /Հ-37/-Վարագավան-Տավուշ-/Հ-36/ կմ0+000+կմ5+600 հատվածի և Հ-84, /Հ-82/(Վարագավան)-Նոր Վարագավանք պատմական հուշարձան կմ1+730+կմ4+400 հատվածների միջին նորոգում	8,27	Տավուշ
4	Հ-82, /Հ-37/-Վարագավան-Տավուշ-/Հ-36/ կմ5+600+կմ19+020 հատվածի միջին նորոգում	13,42	Տավուշ
5	Հ-42, /Մ-2/-Զառիթափ-Նոր Ազնաբերդ-ՀՀ սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ9+500 հատվածի միջին նորոգում	9,5	Վայոց Ձոր
6	Մ-10, Սևան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ2+800-կմ5+300 հատվածի միջին նորոգում	2,5	Գեղարքունիք

7	Մ-4, Երևան - Սևան - Իջևան – ՀՀ սահման (աջ գոտի) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000-կմ51+200 հատվածի միջին նորոգում	15,2	Կոտայք
8	Մ-4, Երևան - Սևան - Իջևան – ՀՀ սահման (աջ գոտի) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ51+200-կմ64+174 հատվածի միջին նորոգում	12,974	Գեղարքունիք
9	/Մ-1/ Մոտեցում Գյումրու օդանավակայանին կմ0+040-կմ2+000 (աջ և ձախ գոտիներ) հատվածի միջին նորոգում	3,92	Շիրակ
10	Մ-1, Երևան -Գյումրի - ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ171+700-կմ172+980 հատվածի միջին նորոգում	1,28	Շիրակ
11	Հ-7, /Մ-4/ -Շորժա-Վարդենիս-/Մ-10/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ78+100-կմ97+032 հատվածի միջին նորոգում	18,932	Գեղարքունիք
12	Տ-3-48, /Մ-5/ (Սարդարապատ) - Այգեվան - Լենուղի - /Մ-5/ կմ0+000-կմ6+200 հատվածի միջին նորոգում	6,2	Արմավիր
13	Մ-4, Երևան- Սևան - Իջևան - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+702-կմ83+145 հատվածի միջին նորոգում և կմ83+145-կմ84+372 հատվածի գծանշում	2,443	Գեղարքունիք
14	Տ-1-4, /Հ-20/ (Ագարակ) - Աշտարակ-Բյուրական տրանսպորտային հանգույց - /Տ-1-77/ կմ0+00-կմ2+750, Տ-1-77, /Հ-19/ (Աշտարակ) - /Մ-1/ կմ0+704-կմ3+694 և Տ-1-78, /Հ-20/ - /Տ-1-4/ (Ագարակի շրջանց) կմ0+000-կմ2+718 և Աշտարակ-Բյուրական տրանսպորտային հանգույցի միջին նորոգում	10,572	Արագածոտն
15	Մ-2, Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ181+750-կմ182+727 հատվածի միջին նորոգում	0,977	Սյունիք
16	Հ-63, /Մ-2/ (Կապան) -Ծավ- /Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ 1+784 և կմ9+095-կմ 12+275 հատվածների միջին նորոգում	4,964	Սյունիք
17	Հ-63, /Մ-2/ (Կապան) -Ծավ- /Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 52+888-կմ 73+600 հատվածի միջին նորոգում	20,712	Սյունիք

18	Տ-3-65, /Մ-5/ -Գեղակերտ-Ծաղկալանջ-Արագած-Աղավնատուն, (Տ-3-44) կմ 2+700-կմ 6+100 և կմ7+520-կմ 8+350, Տ-3-36 Աղավնատուն (Տ-3-44) - Ամբերդ - Այգեշատ - Դաշտ (Տ-3-64) կմ1+700-կմ4+700 և Տ-3-4/Տ-3-44/-Ամբերդ (Տ-3-36) կմ0+000-կմ2+000 մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների հատվածների միջին նորոգում	9,23	Արմավիր
19	Մ-5, Երևան-Արմավիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ7+041-կմ10+430 հատվածի միջին նորոգում	6,778	Արմավիր
20	Մ-1, Երևան -Գյումրի - ՀՀ սահման (Բավրա) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ11+890-կմ14+400 հատվածի միջին նորոգում	5,02	Կոտայք

2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 5,088,982,000 ՀՀ դրամ, որը ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է, և ճշտված պլանը կազմել է 8,493,882,300 ՀՀ դրամ: Փաստացի ծախսը կազմել է 8,337,347,300 ՀՀ դրամ, տարբերությունը՝ 156,535,000 ՀՀ դրամ, որից 2025 թվականին անավարտ մնացած և 2026 թվական տեղափոխված պայմանագրերի արժեքը կազմում է 51,039,223 ՀՀ դրամ:

2025 թվականի միջին նորոգման ծրագրերով իրականացված աշխատանքների համար պետական բյուջեից փաստացի ֆինանսավորման տոկոսը՝ ճշտված բյուջեի նկատմամբ, կազմում է 98,2%:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջին նորոգման ենթակա ճանապարհահատվածների ուսումնասիրություններ և թերությունների ակտերի կազմման աշխատանքներ:

2025թ.	Նախատեսված	Փաստացի
Ուսումնասիրություն, այցելություն	15	19
Հսկողություն, այցելություն	150	162

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀՃՄՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող խոշոր ենթակառուցվածքային ծրագիր է: Ծրագրի նպատակներն են՝ հարևան երկրների հետ հաղորդակցման դյուրինացումը, Կենտրոնական Ասիա և Եվրոպա ձգվող հաղորդակցության ուղիներով դեպի արտաքին շուկաներ ելքի հնարավորությունների ընդլայնումը, տնտեսության հիմնական ոլորտների զարգացումն ու արտահանման ընդլայնումը (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, զբոսաշրջություն), բնակչության ներքին շարժի ակտիվացումը և այլն: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի հարավային սահմանից դյուրին երթևեկությունը մինչև Վրաստանի սահման, ապա նաև՝ դեպի սևծովյան նավահանգիստներ, թույլ կտա իրականացնել բարձր չափանիշներին համապատասխանող բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ, զարգացման լուրջ հնարավորություններ կընձեռի Հայաստանի հարավից հյուսիս ընկած բոլոր բնակավայրերին:

ՀՀՃՄՆ ծրագիրն իրականացվում է տրանշերով, որոնցից յուրաքանչյուրն առանձին ծրագիր է և ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից:

- **Տրանշ-1.** Երևան-Աշտարակ և Երևան-Արտաշատ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացված ավարտված ծրագիր)
- **Տրանշ-2.** Աշտարակ-Թալին ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Թալին-Լանջիկ ճանապարհահատված (Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-3.** Լանջիկ-Գյումրի ճանապարհահատված (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)

- **Տրանշ-4.** Քաջարան-Ագարակ ճանապարհահատված (Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-4.** Քաջարանի թունելի և մոտեցումների կառուցման ծրագիր (Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-4.** Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի կառուցման ծրագիր (ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի, ԱԶԲ-ի, Ֆրանսիայի կառավարության և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող ընթացիկ ծրագիր)
- **Տրանշ-4.** Արտաշատ-Սիսիան ճանապարհահատված (նոր նախաձեռնություն)
- **Տրանշ-5.** Գյումրու շրջանցիկ և Քեթի-Բավրա ճանապարհահատված (նոր նախաձեռնություն):

Բոլոր ծրագրերն իրականացվում են
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից:

3.1 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 2

Տրանշ 2-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Աշտարակ-Թալին հատվածում նախատեսված էր կառուցել I տեխնիկական կարգի (100 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) շուրջ 42 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված: Գոյություն ունեցող՝ երկու երթևեկելի գոտուց բաղկացած միակողմանի Մ-1 մայրուղին վերակառուցվել է՝ վերածվելով միջազգային չափանիշներին համապատասխանող երկկողմանի, չորս երթևեկելի գոտի ունեցող ավտոմայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը՝

ա) ճանապարհահատվածի հարմարավետության ու անվտանգության բարձրացում,

բ) ապրանքաշրջանառության մեծացում,

գ) տրանսպորտային ծախսերի կրճատում,

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում,

ե) զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 210,000,000 ԱՄՆ դոլար, որից



170,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց

40,000,000 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. 2729-ARM, ստորագրված՝ 30.05.2011թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 01.04.2015թ.-01.10.2034թ.:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,30%, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար (վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից հաշված):

Շինարարությունը իրականացվել է երկու հատվածներով՝ Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատված (կմ29+600-կմ37+545) և 34 կմ անավարտ հատված (կմ37+545-կմ71+500):

Տրանշ 2, 8 կմ հատվածի կապալառուն «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ (Հայաստան) և «Դինեշչանդրա Ռ Ագրիվալ ինտրակոմ» (Հնդկաստան) համատեղ ձեռնարկությունն է:

Տրանշ 2, 34 կմ անավարտ հատվածի կապալառուն «Լեվանտինա Ինխեներիա ի Կոնստրուկսիոն» ՍՊԸ (Իսպանիա) և «Օբրաս Պուբլիկաս ի Ռեգադիոս» ԲԸ (Իսպանիա) համատեղ ձեռնարկությունն է:

Ծրագրի ինժեներ (տեխնիկական վերահսկող) հանդիսանում է «ԷՋԻՍ Ինթերնեյշնլ» (Ֆրանսիա) և «Կոքս Քընսալթինգ» (Գերմանիա) համատեղ ձեռնարկությունը:

8 կմ հատված

2022 թվականի հոկտեմբերին ընտրված կապալառուի հետ կնքվել է շինարարական աշխատանքների պայմանագիր: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հունվարի 16-ին:

Աշխատանքների շրջանակում կառուցվել են 1 ճանապարհային հանգույց, 3 կամուրջ, 5 T-աձև հանգույց և իջատեղ, 8 արհեստական կառուցվածք՝ ներառյալ գյուղատնտեսական անցումներ, անասնանցումներ և գետային անցումներ: Շուրջ 8կմ ճանապարհահատված ասֆալտապատվել է երեք շերտով, ինչպես նաև կահավորվել անվտանգային անհրաժեշտ տարրերով: Տեղադրվել են մետաղական արգելափակոցներ և ճանապարհային նշաններ, իրականացվել է ճանապարհի գծանշում:

Պայմանագրի ավարտի ժամկետը նախատեսված էր 2024 թվականի հուլիսի 15-ին: 2024 թվականի հոկտեմբերի 31-ին կապալառուին ներկայացվել է պայմանագրի ավարտի ժամկետի ուշացման համար տույժի առավելագույն գումարի պահանջ՝ 2,1 միլիոն ԱՄՆ դոլարի չափով:

2025 թվականի ընթացքում նախաձեռնվել են նաև Ոսկեվազ–Ագարակ ճանապարհային հանգույցի լուսավորության նախագծման և տեղադրման աշխատանքները, որոնք նույնպես ավարտվել են:

Կառուցված ճանապարհահատվածը շահագործման է հանձնվել 2025 թվականի հոկտեմբերի 3-ին: Ներկայումս ընթացքի մեջ է FIDIC պայմանագրերով նախատեսված թերությունների հայտնաբերման և վերացման ժամանակահատվածը:

34 կմ հատված (կմ37+545-կմ71+500)

2021թ. սկսվել են 34 կմ հատվածի (կմ37+54 -կմ71+500) նախագծի և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որոնք ավարտվել են 2022թ. հունվարի վերջին: Նախագիծն անցել է պարզ և համալիր փորձաքննությունները:

2025Թ. ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ԻՆԺԵՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵԼ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

25.08.2022թ. հայտարարվել է շինաշխատանքների ձեռքբերման միջազգային մրցույթ, որի արդյունքում 03.10.2023թ. շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է կնքվել «Լեվանտինա Ինխեներիա ի Կոնստրուկսիոն» ՍՊԸ և «Օբրաս Պուբլիկաս ի Ռեգադիոս» ԲԸ համատեղ ձեռնարկության հետ: Աշխատանքների մեկնարկը տրվել է 13.11.2023թ.:

Պատվիրատուի հանձնարարությամբ Ծրագրի շինարարական աշխատանքները մեկնարկել են Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի կմ59+980–կմ68+820 հատվածում: Նշված հատվածը միակողմանի կառուցվել և կահավորվել է անվտանգության համապատասխան տարրերով և 2023թ. դեկտեմբերի 15-ից բացվել է երթևեկության համար:

Ծրագրի շրջանակներում նախագծով նախատեսվել և իրականացվել են 34 կմ հիմնական ճանապարհի և մոտ 19 կմ դաշտային ճանապարհների, 9 փոխհատումների, 19 Т-աձև հանգույցների, 4 կամուրջների, 6 գյուղատնտեսական տեխնիկայի անցումների, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները, այդ թվում՝ 49 երկաթբետոնե ջրթող խողովակների կառուցում: Ամբողջությամբ ավարտվել են հիմնական ճանապարհի ասֆալտապատման (8սմ հիմք + 7սմ կապակցող շերտ + 5սմ վերին շերտ), ինչպես նաև նախագծով նախատեսված բոլոր արհեստական կառուցվածքների կառուցման աշխատանքները: Իրականացվել է նաև դաշտային մոտեցնող ճանապարհների կառուցում, որոնց մի մասը նախատեսված էր նախագծով, իսկ մյուս՝ զգալի մասը, Ծրագրի նախագծում ընդգրկվել է մանրամասն վերլուծությունների և տեխնիկական ուսումնասիրությունների արդյունքում: Կառուցված ճանապարհահատվածը շահագործման է հանձնվել 2025 թվականի դեկտեմբերի 25-ին: Հանգույցներում նախատեսված լուսավորության համակարգի էլեկտրական ցանցերի սնուցման կայաններին միացման աշխատանքները շարունակվելու են 2026 թվականի առաջին կիսամյակում:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NNo	Բաղադրիչներ, ենթածրագրերը և կատեգորիաներ*	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները			
		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		
			Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին		Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Այլ աղբյուրների հաշվին
1	1	2	3	4	5	6	7	8
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2, այդ թվում՝	37,839,672.41	117,386.49	37,722,285.91	33,737,147.80	3,701,496.86	30,035,650.94	251,400.00
ա)	շինարարական աշխատանքներ	35,660,662.34	0.00	35,660,662.34	31,742,331.17	3,452,693.14	28,289,638.03	0.00
բ)	խորհրդատվական ծառայություններ	1,720,530.99	117,386.49	1,603,144.50	1,540,190.32	248,803.72	1,291,386.60	251,400.00
գ)	դրամաշնորհներ ՀՕՏԾ-ի գծով	9,804.81	0.00	9,804.81	9,804.81	0.00	9,804.81	0.00
դ)	պահպանման ծախսեր	448,674.26	0.00	448,674.26	444,821.49	0.00	444,821.49	0.00

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2025թ.



3.2 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

Տրանշ 3-ի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ունենալ հյուսիսից հարավ ձգվող արդյունավետ, անվտանգ և կայուն ճանապարհային միջանցք՝ կապելով Հայաստանի Հանրապետությունը միջազգային և տեղական մակարդակներով: Մասնավորապես, Տրանշ 3-ի շրջանակներում նախատեսված է եղել Թալին և Լանջիկ քաղաքների միջև գտնվող մոտ 18,7 կմ երկարությամբ Թալին-Լանջիկ երկուղի ճանապարհային հատվածի վերակառուցում և այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթևեկությամբ քառուղի մայրուղու:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում՝

ա) կդյուրինացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները,

բ) կմեծանա առևտրի շրջանառությունը, մրցակցությունը,

գ) կնվազեն փոխադրումների ծախսերը,

դ) կմեծանա շուկաների, աշխատատեղերի, սոցիալական ծառայությունների հասանելիությունը,

ե) կբարելավվի կառավարումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 132,406,091 ԱՄՆ դոլար, որից



100,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց

32,406,091 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No.2993-ARM, ստորագրված՝ 11.03.2014թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 27 տարի (7 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ LIBOR+0,60% - 0,20%, չմասհանված գումարների նկատմամբ՝ 0,20% կոմիսիոն վճար, չմասհանված գումարների նկատմամբ՝ տարեկան 0,15% կոմիսիոն վճար:

Ծրագրի հիմնական կապալառուն չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունն է, որի հետ 2016 թվականի մայիսի 25-ին ստորագրվել է No T3-CW-01 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ71+500-կմ90+200 (Թալին-Լանջիկ հատված) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

Ծրագրի խորհրդատուն (տեխնիկական վերահսկողը) իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունն է (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը

2022 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ Է ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԵՎ ՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՈՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԹԱՓՈՎ ԸՆԹԱՑԵԼ ԵՎ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, 2022Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԲԱՑՎԵԼ Է ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ:

2025 թվականի ընթացքում Կատարողական վկայականի թողարկման գործընթացը չի ավարտվել՝ պայմանավորված ճանապարհածածկի վրա արձանագրված թերությունների, մասնավորապես՝ ճաքերի վերացման անհրաժեշտությամբ:

Պատվիրատուի, Կապալառուի և Ինժեների միջև ընթանում են համապատասխան քննարկումներ և բանակցություններ: Միաժամանակ, Ինժեների հետ համատեղ իրականացվում են թերությունների վերացմանն ուղղված աշխատանքներ:

Կատարողական վկայականը կտրամադրվի պայմանագրով սահմանված կարգով՝ Կապալառուի կողմից մնացած պարտավորությունների պատշաճ կատարման և արձանագրված թերությունների ամբողջական վերացման աշխատանքների ավարտից հետո:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում՝			այդ թվում՝		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, Վարկ 2993-ARM, այդ թվում՝	**412,120.43**	**23,684.55**	**388,435.88**	**583,441.36**	**162,662.41**	**420,778.95**
1	Շինարարական աշխատանքներ	329,342.06	0.00	329,342.06	329,342.06	0.00	329,342.06
2	Խորհրդատվություն և նախագծում	41,885.88	23,684.55	18,201.33	200,625.23	162,662.41	37,962.82
3	Ծրագրի կառավարման աջակցություն	40,892.49	0.00	40,892.49	53,474.08	0.00	53,474.08

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2025թ.



3.3 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 3

Տրանշ 3-ի շրջանակներում իրականացվել է նաև Մ-1 միջպետական նշանակության ավտոճանապարհի Թալին–Գյումրի հատվածի՝ Լանջիկ բնակավայրի և Գյումրի քաղաքի միջև ընկած մոտ 27,47 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման և բարելավման ծրագիրը: Ծրագիրն իրականացվել է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ և նախատեսում է նշված ճանապարհահատվածի վերակառուցում՝ այն վերածելով երկկողմանի երթևեկությամբ քառուղի մայրուղու:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 79,845,934 եվրո, որից



60,000,000 եվրո վարկային միջոց
6,000,000 եվրո դրամաշնորհ
13,845,934 եվրո ՀՀ համաֆինանսավորում

Ծրագիրն ունեցել է նաև տեխնիկական աջակցության մաս՝ 6,000,000 եվրո արժողությամբ դրամաշնորհ:

Ծրագիրը ֆինանսավորվել է ԵՆԲ-ի վարկային միջոցներից, ԵՆԲ-ի միջոցով Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքի շրջանակներում տրամադրված դրամաշնորհային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. FI82.634, ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև՝ 07.11.2013 թվականին Երևանում և 18.11.2013 թվականին Լյուքսեմբուրգում:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30 տարի:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ հաստատագրված կամ լողացող, ամրագրվելու է առանձին՝ յուրաքանչյուր տրանշի համար: Լողացող տոկոսադրույքը հավասար է 6-ամսյա EURIBOR գումարած 0,623% մարժա:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունն է, որի հետ 2015 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրվել է No T3-CW-02 (Մ-1 Թալինից Գյումրի ճանապարհի կմ90+200-կմ117+670 հատվածի (Լանջիկ-Գյումրի հատվածի) վերակառուցում և բարելավում) պայմանագիրը:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (տեխնիկական վերահսկողը) իտալական «Այ-Ար-Դի Ինժեներինգ Ս.ր.Լ» ընկերությունն է (Ծրագրի ինժեներ):

Ծրագրի ընթացիկ վիճակը

Պայմանագիրը կնքվել է 08.12.2015թ.՝ 74.066.179,92 եվրո ընդհանուր արժողությամբ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 20.06.2016թ. (1096 օր կատարման ժամկետով, մինչև 21.06.2019թ.):

Հիմնական ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, և ճանապարհահատվածը 2025 թվականի մարտի 19-ից բացվել է երթևեկության համար:

Միաժամանակ, Պատվիրատուի, Կապալառուի և Ինժեների միջև ընթանում են բանակցություններ, ինչպես նաև Ինժեների հետ համատեղ իրականացվում են ճանապարհահատվածում հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված աշխատանքներ:

Ճանապարհահատվածի վերջնական հանձնման-ընդունման գործընթացը և Կատարողական վկայականի տրամադրումը կիրականացվեն պայմանագրով սահմանված կարգով՝ Կապալառուի կողմից մնացած պարտավորությունների պատշաճ կատարման և հայտնաբերված թերությունների ամբողջական վերացման աշխատանքների ավարտից հետո:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վարկային ծրագիր

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	**2,310,776.48**	**1,925,645.22**	**385,131.26**	**800,103.77**	**391,194.58**	**408,909.19**
1	Շինարարական աշխատանքներ	1,707,961.44	1,423,301.20	284,660.24	311,533.08	0.00	311,533.08
2	Խորհրդատվություն և նախագծում	602,815.04	502,344.02	100,471.02	488,570.69	391,194.58	97,376.11

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում			այդ թվում		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3, այդ թվում՝	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1	Շինարարական աշխատանքներ						
2	Խորհրդատվություն և նախագծում**						

Ծրագրի ֆինանսական հոսքերի գրաֆիկն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2025թ. (մլն եվրո)



3.4 ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4 ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է Քաջարան-Ագարակ շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ II տեխնիկական կարգի (80 կմ/ժամ հաշվարկային արագությամբ) ճանապարհահատվածի վերակառուցումը:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքը՝

ա) Քաջարան-Ագարակ հատվածում II տեխնիկական կարգի ճանապարհի կառուցում,

բ) տրանսպորտային միջոցների ներկայիս 50 կմ/ժ միջին արագության ավելացում մինչև 80 կմ/ժ,

գ) ուղևորության ժամանակի կրճատում մոտ 35-40 րոպեով,

գ) ապրանքաշրջանառության մեծացում,

դ) տարանցիկ տրանսպորտի ներգրավում,

ե) զբոսաշրջության զարգացում:

Նոր երթուղու ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 32 կմ: Ծրագիրը ներառում է 5 նոր տրանսպորտային հանգույցների, 6 նոր վերգետնյա անցումների, մոտ 920 մետր ընդհանուր երկարությամբ 2 նոր թունելների և 15 նոր կամուրջների կառուցում: Կառուցվելուց հետո ճանապարհի նշված հատվածը կհամապատասխանի միջազգային առաջադեմ չափանիշներին՝ ճանապարհային անվտանգության, հարմարավետության և ուղևորության ժամանակի կրճատման առումով:



Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները



Ծրագրի բյուջե՝ 236,681,000 ԱՄՆ դոլար (առանց հարկերի), որից՝
150,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոց և 86,681,000 ԱՄՆ դոլար ՀՀ համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծախսերի ֆինանսավորում Եվրասիական զարգացման բանկի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի տվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ստորագրված՝ 14.04.2015 թվականին Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև: 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրվել է թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը՝ համաձայն որի՝ ծրագրի բյուջեն, առանց ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հարկերի, կազմում է 236,681,000 ԱՄՆ դոլար:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 30.06.2020 թվականից 30.12.2034 թվականը:

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ տարեկան 1,65%:

Ծրագրի ընթացիկ վիճակը

2023 թվականին իրականացվել է Կապալառու ընկերության ընտրության գործընթացը: Գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել իրանական «Abad Rahan Pars International Group» և «Tunnel Sadd Ariana» («Աբատ Ռահան Պարս Ինթերնեյշնլ Գրուպ» և «Թունել Սադ Արիանա») համատեղ ձեռնարկությունը: 2023 թվականի հոկտեմբերի 23-ին ստորագրվել է համապատասխան կապալի պայմանագիր: Պայմանագրի արժեքը կազմում է 214,4 մլն ԱՄՆ դոլար (այդ թվում՝ հարկերը):

2023 թվականին իրականացվել է նաև տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության ընտրության գործընթացը: Գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել խորվաթական «IGH ինստիտուտ» կազմակերպությունը: 2023 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրվել է համապատասխան պայմանագիր: Պայմանագրի արժեքը կազմում է 1,7 մլն ԱՄՆ դոլար և 1,7 մլրդ ՀՀ դրամ (առանց հարկերի):

Հիմնական շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի մայիսին և պետք է ավարտվեն 2027 թվականին:

2025 թվականին շինարարական աշխատանքները ընթացել են բավականին արագ տեմպերով և ըստ ժամանակացույցի: Կատարված աշխատանքների ֆիզիկական առաջընթացը 2025 թվականի վերջին կազմել է շուրջ 40%: Մասնավորապես՝

✓ *նախատեսված 15 կամուրջներից 14-ի վրա իրականացվել են կառուցման աշխատանքներ, այդ թվում՝ 13 կամրջի վրա կատարվել են բետոնացման աշխատանքներ: Բետոնացման աշխատանքների ծավալն 2025 թվականի վերջին կազմել է շուրջ 33 հազար խորանարդ մետր,*

✓ *455մ երկարությամբ (ներառյալ թունելի պորտալները) առաջին թունելի փորման աշխատանքներն ավարտվել են: Մեկնարկել են երեսարկի բետոնացման աշխատանքները,*

✓ *սկսվել են երկրորդ թունելի (երկարությունը՝ ներառյալ թունելի պորտալները, շուրջ 530 մ) փորման աշխատանքները: 2025 թվականին փորվել է ավելի քան 301մ երկարությամբ հատված,*

✓ *շուրջ 800մ ընդհանուր երկարությամբ հենապատերի կառուցման աշխատանքներն ավարտվել են,*

✓ *հողային աշխատանքների շուրջ 4.5 մլն խորանարդ մետր ընդհանուր ծավալից արդեն իսկ իրականացվել է շուրջ 3.6 մլն խորանարդ մետր,*

✓ *Մեղրի - Ագարակ տրանսպորտային հանգույցի հողային աշխատանքները ավարտվել են, և սկսվել են հանգույցի կառուցման աշխատանքները (բետոնապատում, հենարանների կառուցում և այլն),*

✓ *սկսվել են Մեղրու հարավային տրանսպորտային հանգույցի կառուցման աշխատանքները,*

✓ *2025 թվականին աշխատանքներում միջինում ընդգրկված են եղել շուրջ 700 աշխատակից և 240 միավոր տեխնիկա: Կապալառուի միջին օրական կատարողականը կազմել է շուրջ 65 մլն ՀՀ դրամ:*

2025 թվականին նշված ծրագրի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների դիմաց վճարվել է շուրջ 18,9 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է ծրագրի 2025 թվականի վերանայված (ավելացված) բյուջեի 99.9%-ը:


Financial Chart - 2025
Plan
Actual
100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
Construction Period - Months
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում՝			այդ թվում՝		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս - Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 4, այդ թվում՝	**64,056,217.83**	**53,018,112.64**	**11,038,105.19**	**52,228,663.25**	**42,973,313.38**	**9,255,349.87**
1	ա) շինարարական աշխատանքներ	60,815,731.44	50,679,776.20	10,135,955.24	48,988,176.86	40,634,976.94	8,353,199.92
2	բ)խորհրդատվություն և նախագծում	2,328,450.09	1,901,666.50	426,783.59	2,328,450.09	1,901,666.50	426,783.59
3	գ) հողերի օտարում և վերաբնակեցում	209,042.32	0.00	209,042.32	209,042.32	0.00	209,042.32
4	դ) պահպանման ծախսեր	702,993.98	436,669.94	266,324.04	702,993.98	436,669.94	266,324.04
5	ե) չհատկացված /ապրանքներ/	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

3.5 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Քաջարանի թունելի (երկարությունը շուրջ 7.2 կմ) կառուցման և գոյություն ունեցող Մ-2, Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակությամբ ավտոճանապարհի շուրջ 4 կմ (Քաջարանի թունելի մուտք-Սիսիան-Քաջարան նախատեսվող նոր ճանապարհահատվածի խաչմերուկ) երկարությամբ հատվածի վերակառուցման աշխատանքներ: Նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկված ժամկետը կազմում է շուրջ 6 տարի:

Ծրագրի իրականացման արդյունքում՝

- գործող երթուղին կկրճատվի շուրջ 14 կմ-ով,

- տրանսպորտային միջոցների միջին արագությունը 50 կմ/ժ-ից կհասնի 80 կմ/ժ-ի, մոտ 40 րոպեով կկրճատվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջնացքի ներդրումային ծրագրի Քաջարան-Ագարակ ճանապարհային հատվածի ուղևորության ժամանակը,

- կնվազի Մեղրու լեռնանցքի (ծովի մակարդակից 2535մ բարձրության վրա) օգտագործումը, ինչը զգալիորեն կբարձրացնի ճանապարհային անվտանգության մակարդակը, ինչպես նաև հնարավորություն կստեղծի խուսափել ձմռանը Մեղրու լեռնանցքի անցանելիության ապահովման հետ կապված առկա դժվարություններից,

- կավելանա ապրանքաշրջանառությունը:

Ծրագրի ֆինանսավորումը

Ծրագրի իրականացման համար 2024 թվականի հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջև կնքվել է ներդրումային վարկային համաձայնագիր:

Ծրագրի արժեքը (առանց ՀՀ օրենսդրությամբ պահանջվող հարկերի) կազմում է 329 մլն ԱՄՆ դոլար (200 մլն ԱՄՆ դոլար՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ և 129 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՀ համաֆինանսավորում):

Ըստ կնքված ներդրումային վարկային համաձայնագրի՝

1) ներդրումային վարկի հասանելիության ժամկետի ավարտ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 108 ամիս,

2) ներդրումային վարկի ժամկետ՝ ուժի մեջ մտնելու օրվանից 20 տարի, ներառյալ այն ժամանակահատվածը (5 տարի), որի ընթացքում չի կատարվում հիմնական պարտքի մարում,

3) տոկոսներ՝ տարեկան 4%,

4) Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝

- Բաղադրիչ 1. Ինժեներական և շինարարական աշխատանքներ. թունելի կառուցում և Մ-2 ճանապարհի հատվածի վերակառուցում, ինչպես նաև՝ աշխատանքների կատարման համար ինժեներական և վերահսկողական ծառայություններ,
- Բաղադրիչ 2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ երկու ենթաբաղադրիչների իրականացման միջոցով (Ենթաբաղադրիչ 2.1՝ ճանապարհային թունելների սպասարկման մոնիթորինգի համակարգի մշակում և Ենթաբաղադրիչ 2.2՝ ճանապարհային թունելների սպասարկման մոնիթորինգի համակարգի համար սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում),
- Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում:

Ծրագրի ընթացիկ վիճակը

2025 թվականին շարունակվել են կապալառուի և տեխնիկական հսկողության ձեռքբերման միջազգային մրցույթները: Մասնավորապես՝

✓ Շինարարական աշխատանքների համար ներկայացված առաջարկությունների գնահատումը ավարտվել է, և 2025 թվականի դեկտեմբերի 30-ին մրցույթի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է Կայունացման և զարգացման Եվրասիական

հիմնադրամի դիտարկմանը: Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի կողմից հավանություն ստանալուց հետո մրցույթի արդյունքները կներկայացվեն Ծրագրի կառավարման խորհրդի քննարկմանը և հավանության դեպքում կստորագրվի կապալի պայմանագիր (նախատեսվում է 2026 թվականի երկրորդ եռամսյակում):

✓ Տեխնիկական հսկողության համար ներկայացված առաջարկությունների գնահատումը ավարտական փուլում է: Համապատասխան պայմանագիրը նախատեսվում է ստորագրել 2026 թվականի երկրորդ եռամսյակում:





Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2026 թվականին և ավարտել վեց տարվա ընթացքում:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԱՄՆ դոլար			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԱՄՆ դոլար		
		այդ թվում՝			այդ թվում՝		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Քաջարանի թունելի և մոտեցումների համակարգում և կառավարում, այդ թվում՝	**157,249.64**	**115,410.58**	**41,839.06**	**109,507.73**	**67,668.67**	**41,839.06**
1	ա) շինարարական աշխատանքներ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	բ)խորհրդատվություն և նախագծում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
3	գ) հողերի օտարում և վերաբնակեցում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
4	դ) պահպանման ծախսեր	157,249.64	115,410.58	41,839.06	109,507.73	67,668.67	41,839.06

3.6 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ 60ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ նոր ճանապարհահատված (ներառյալ Բարգուշատի թունելը), որը թույլ կտա կրճատել Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը շուրջ 58կմ-ով, ինչի արդյունքում կնվազի ուղևորության տևողությունը, տրանսպորտային միջոցների ներկայիս 50 կմ/ժ միջին արագությունը կավելանա մինչև 100 կմ/ժ: Միևնույն ժամանակ կբարձրանան երթևեկության հարմարավետությունն ու անվտանգությունը: Ճանապարհահատվածի կառուցումը կնպաստի նաև ապրանքաշրջանառության (Մեղրիի անցակետով անցնում է ապրանքաշրջանառության ծավալի շուրջ 39,1%-ը) մեծացմանը, տրանսպորտային ծախսերի կրճատմանը, տարանցիկ տրանսպորտի ներգրավմանը և տուրիզմի զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կանխատեսվում է նաև տրանսպորտային հոսքերի զգալի ավելացում: Հաշվարկված է, որ առկա շուրջ 4850 մեքենա/օր ցուցանիշի համեմատ 2052 թվականին տրանսպորտային հոսքերը կավելանան շուրջ 2 անգամ:

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության համար ներդնել Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարություն (Intelligent Transport System Strategy), որը կբարելավի ճանապարհների շահագործման և տնտեսական ցուցանիշները:

Ծրագրի շրջանակներում կիրառվելու են բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, կլիմայի փոփոխության վրա ազդեցության մեղմացման մեխանիզմներ, ԵՄ հրահանգ (EU Directive) 2008/96/EC-ի համաձայն՝ ճանապարհային անվտանգության պահանջներ, որոնք սահմանված են ՎԶԵԲ քաղաքականությունով:

Ներդրումային ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կկազմի շուրջ 572.07 մլրդ ՀՀ դրամ (կամ շուրջ 1.34 մլրդ եվրո):

Աշխատանքային մանրամասն նախագիծը մշակվել է 2018 թվականին: Նախագծի համաձայն՝ նախատեսվում է կառուցել II կարգի նոր ճանապարհ՝ I կարգի ճանապարհի պահանջներին համապատասխանող պարամետրերով: Նշված հատվածի ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 60 կմ՝ ներառյալ 27 կամուրջ՝ շուրջ 4.7 կմ ընդհանուր

երկարությամբ, ինչպես նաև 9 թունել՝ 12.5 կմ ընդհանուր երկարությամբ, որոնցից ամենամեծը Բարգուշատի թունելն է՝ մոտ 8.6 կմ երկարությամբ: 27 կմ երկարությամբ Հյուսիսային հատվածը կկառուցվի ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի միջոցների, 24.2 կմ Հարավային հատվածը՝ ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի միջոցների ներգրավմամբ: Ծրագրի ֆինանսավորման նպատակով ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի հետ վարկային համաձայնագրերը կնքվել են 2024 թվականին, իսկ ԱԶԲ-ի հետ՝ 2025 թվականի մարտի 18-ին: Յուրաքանչյուր վարկային համաձայնագրով նախատեսված ֆինանսավորման չափը կազմում է 236 մլն եվրո:

Բարգուշատի թունելի կառուցումը նախատեսվում է իրականացնել Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ: Այդ նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է Ֆրանսիայի կառավարությանը, իսկ ֆրանսիական կողմի հետ քննարկվել են կապալառու ընկերության և տեխնիկական հսկողության խորհրդատուի ընտրության գնումների ռազմավարությունները: Ֆրանսիական կողմին տրամադրվել է նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը՝ հնարավոր կապալառուների հետ քննարկելու և նրանց հետաքրքրվածությունը հաստատելու նպատակով: Ֆինանսավորման վերաբերյալ բանակցությունները գտնվում են ավարտական փուլում:

Երեք ենթահատվածների (Հյուսիսային և Հարավային հատվածներ, Բարգուշատի թունել) շինարարության տևողությունը գնահատվում է մոտ 6 տարի: Շինարարության ավարտից հետո նախատեսվում է 2 տարվա երաշխիքային ժամկետ՝ հնարավոր թերությունների վերացման համար:



Հաշվի առնելով Ծրագրի բարդությունը և երեք հատվածների փոխկապակցվածությունը՝ դոնոր կազմակերպությունները ՀՀ կառավարությանը առաջարկել են ներգրավել միջազգային

մասնագիտացված Ծրագրի կառավարման խորհրդատու (ԾԿԽ) ընկերություն, որը կաջակցի Ծրագրի սահուն և արդյունավետ իրականացմանը: ԾԿԽ ներգրավումը հնարավորություն կտա կառավարել ռիսկերը, արագ և արդյունավետ լուծումներ տալ ի հայտ եկող խնդիրներին, բարձրացնել հաշվետվողականությունը, ներդնել խոշոր ծրագրերի կառավարման ստանդարտներ, աջակցել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարողությունների հզորացմանը՝ նման միջազգային խոշոր ծրագրեր իրականացնելու համար: Սիսիան-Քաջարան ճանապարհի Ծրագրի կառավարման խորհրդատուի ծառայությունների ձեռքբերման մրցույթը Հիմնադրամի կողմից հայտարարվել է 2025 թվականի հուլիսի 10-ին: Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել 27 միջազգային խորհրդատվական կազմակերպություն: Մրցութային գործընթացը շարունակվում է:

Հյուսիսային հատվածի կապալառուի ընտրության մրցույթը հայտարարվել է 2025 թվականի նոյեմբերի 13-ին, առաջարկների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի հունվարի 22-ը: Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել 5 միջազգային շինարարական կազմակերպություն: Մրցութային գործընթացը շարունակվում է:

Հյուսիսային հատվածի տեխնիկական հսկողության խորհրդատուի ընտրության մրցույթը հայտարարվել է 2025 թվականի հուլիսի 14-ին, առաջարկների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի օգոստոսի 27-ը: Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել 30 միջազգային խորհրդատվական կազմակերպություն: Մրցութային գործընթացը շարունակվում է:

Հարավային հատվածի կապալառուի ընտրության մրցույթը հայտարարվել է 2025 թվականի դեկտեմբերի 24-ին, առաջարկների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի փետրվարի 24-ը:

Հարավային հատվածի տեխնիկական հսկողության խորհրդատուի ընտրության մրցույթը հայտարարվել է 2025 թվականի նոյեմբերի 3-ին, առաջարկների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի դեկտեմբերի 15-ը: Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել 14 միջազգային խորհրդատվական կազմակերպություն: Մրցութային գործընթացը շարունակվում է:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, ԵՎՐՈ			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, ԵՎՐՈ		
		այդ թվում՝			այդ թվում՝		
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագիր», Սիսիան-Քաջարան 60կմ-ի Հյուսիսային հատվածի կառուցում, այդ թվում՝	**143,104.88**	**0.00**	**143,104.88**	**141,677.93**	**0.00**	**141,677.93**
1	*Շինարարական աշխատանքներ*						
2	*Ապրանք*						
3	*Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների մեղմման ծախսեր*						
4	*Հողի օտարում և փարաբնակեցում*	143,104.88	0.00	143,104.88	141,677.93	0.00	141,677.93
5	*Խորհրդատվական ծառայություններ*						
6.	*Ծրագրի կառավարման ծախսեր*						
7	*Չհատկացված*						
8	*Տոկոսավճարներ և պարտավորավճարներ*						

3.7 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 4

ԱՐՏԱՇԱՏ-ՍԻՍԻԱՆ ՇՈՒՐՋ 162 ԿՄ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԱԻՆ ԾՐԱԳԻՐ

Նախնական նախագծով նախատեսվում է վերակառուցել II տեխնիկական կարգի (100 կմ/ժ հաշվարկային արագությամբ) շուրջ 162 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատված, այդ թվում՝ 14 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջներ և 12,4 կմ ընդհանուր երկարությամբ թունելներ:

Նախնական նախագիծը պատրաստ է:

Ֆինանսավորման խնդիրը դեռ լուծված չէ:

2023 թվականին մեկնարկել են մանրամասն նախագծման պարտականությունների շրջանակի մշակման աշխատանքները: Նշված պարտականությունների շրջանակը պատրաստ է, և համապատասխան ֆինանսավորման պարագայում կհայտարարվի մանրամասն նախագծման միջազգային մրցույթ:

2025 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը սկսել է ինտենսիվ աշխատանքներ՝ մանրամասն նախագծի պատրաստման ֆինանսավորման հնարավորությունը որոշելու համար:



3.8 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ՏՐԱՆՇ 5

ԳՅՈՒՄՐՈՒ ՇՐՋԱՆՑԻԿ ԵՎ ՔԵԹԻ-ԲԱՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ

Գյումրու շրջանցիկ-Քեթի-Բավրա (Վրաստանի սահման) շուրջ 60 կմ երկարությամբ ճանապարհահատվածի ծրագրի իրականացման ընդհանուր արժեքը, նախնական գնահատմամբ, կազմում է շուրջ 292 մլն եվրո: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել փուլային մոտեցմամբ՝ հաշվի առնելով տեխնիկական ծավալը, ֆինանսավորման ներգրավման հնարավորությունները, ինչպես նաև առանձին ճանապարհահատվածների կառուցման առաջնահերթությունը:

Ծրագիրն իրականացվելու է երկու փուլով. առաջին փուլով նախատեսվում է իրականացնել Գյումրու շրջանցիկ՝ շուրջ 23 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարությունը, որի արժեքը նախնական գնահատմամբ կազմում է շուրջ 132 մլն եվրո, իսկ երկրորդ փուլով՝ Քեթի-Բավրա (Վրաստանի սահման) շուրջ 37 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարությունը, որի արժեքը նախնական գնահատմամբ կազմում է շուրջ 160 մլն եվրո:

2025 թվականի ընթացքում շարունակվել են Ծրագրի նախապատրաստական աշխատանքները՝ ներառյալ տեխնիկատնտեսական, նախագծային, բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների հետ կապված գործընթացները: Գյումրու շրջանցիկ ճանապարհահատվածը դիտարկվում է որպես Հյուսիս–հարավ ուղղությամբ ճանապարհային կապերի բարելավման կարևոր բաղադրիչ, որը հնարավորություն կտա տարանցիկ տրանսպորտային հոսքերը դուրս բերել Գյումրի քաղաքից, նվազեցնել ներքաղաքային երթևեկության ծանրաբեռնվածությունը, բարձրացնել ճանապարհային անվտանգության մակարդակը և հյուսիսային ուղղությամբ բարելավել Հայաստանի միջազգային կապը Վրաստանի սահմանի հետ:

Միաժամանակ, «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության շրջանակում Գյումրու շրջանցիկ ճանապարհը դիտարկվում է ավելի լայն համատեքստում՝ Ախուրիկ–Կայան ուղղության և հարակից ճանապարհային կապերի ընդհանուր շրջանակում: Հաշվի առնելով, որ նշված ուղղությունը կարող է ներառել փոխկապակցված ենթակառուցվածքային լուծումներ

և պահանջել միասնական տեխնիկական, տնտեսական ու ֆինանսական մոտեցում՝ Տրանշ 5-ի մասով EPIC-ի առանձին հայտի գործընթացը ժամանակավորապես կասեցվել է:

Նշված մոտեցման նպատակն է խուսափել ուսումնասիրությունների և խորհրդատվական աշխատանքների կրկնությունից, ապահովել ծրագրային բաղադրիչների փոխհամաձայնեցված ներկայացումը և ձևավորել առավել համակարգված համագործակցություն ֆինանսավորում իրականացնող գործընկերների հետ: Արդյունքում, Ծրագրի հետագա իրականացումը նախատեսվում է դիտարկել Ախուրիկ–Կայան ուղղության և հարակից ճանապարհային կապերի ընդհանուր ծրագրային շրջանակում՝ ֆինանսավորման աղբյուրների, տեխնիկական լուծումների և իրականացման հաջորդականության հստակեցումից հետո:

3.9 ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է Մ-6, Վանաձոր(Մ-3 հատման կետ)-Ալավերդի-ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ավտոճանապարհի Թումանյան-Բագրատաշենի սահմանային անցակետ կմ38+450-կմ90+191 հատվածի հիմնանորոգումը և Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման մանրամասն նախագծերի պատրաստումը: Ծրագրում ընդգրկվել է նաև 2024 թվականի մայիսին Դեբեդ գետի վարարման հետևանքով Մ-6 ճանապարհի վնասված տեղամասերի վերականգնման և հետագա հնարավոր վարարումների հետևանքով խոցելի տեղամասերի դիմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների մանրամասն նախագծերի պատրաստումը:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և պայմանները

Ծրագրի բյուջե՝ 52,972,386.33 եվրո, որից



41,395,781.40 եվրո վարկային միջոց

11 576 604,93 եվրո համաֆինանսավորում

Ծրագրի շրջանակներում նախատեսված է ծախսերի ֆինանսավորում ԱԶԲ-ի վարկային միջոցներից և ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից:

Վարկի փվյալներ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ No. 3449-ARM՝ ստորագրված 09.11.2016 թվականին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև:

ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 22 տարի (15 տարի արտոնյալ ժամանակահատված):

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ՝ մասհանված գումարների նկատմամբ՝ 6-ամսյա EURIBOR+0.5% մարժա, ինչպես նաև տարեկան 0.15% չմասհանված վարկի գումարի նկատմամբ:

ԾՐԱԳՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐՆ ԵՆ՝

1. «Հորիզոն-95» ՍՊԸ և «Օբերոսլեր ԿԱՎ ՊԻԵՏՐՈՍ» ՍՊԸ համատեղ ձեռնարկություն,

2. «Բլաք Սի Գրուփ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկություն,

3. «Սուարդի» բաժնետիրական ընկերություն:

ԾՐԱԳՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՆ ԵՆ՝

1. Շինարարության տեխնիկական հսկողության մասով՝ ֆրանսիական «Սաֆեժ ՍԱՍ և Հիլլ Ինթերնեյշնլ Էն.Վի.» համատեղ ձեռնարկություն (Ծրագրի ինժեներ),

2. Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնման, ինչպես նաև Մ-6 ճանապարհի հետաղետային վերականգնման և բարելավման նախագծերի մշակման մասով՝ «ԲԵՌՆԱՐԴ Գրուպ» ՍՊԸ (Ավստրիա) և «Ակտես ԲԵՌՆԱՐԴ» ՍՊԸ (Ավստրիա) համատեղ ձեռնարկություն:

Ծրագրի ընթացիկ վիճակը

Ծրագրի ընթացքում վերակառուցվել և 2023 թվականին շահագործման է հանձնվել 51.13 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ:

2025 թվականի ընթացքում ավարտվել են Պուշկինի թունելի վերականգնման մանրամասն նախագծման աշխատանքները: Նախագիծը պատրաստ է իրականացման:

Դիլիջանի թունելի ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ նպատակահարմար է համարվել ոչ թե վերականգնման և արդիականացման նախագիծ մշակել, այլ նոր թունել նախագծել: Դիլիջանի նոր թունելի կառուցման նախագծային աշխատանքներն ավարտվել են 2025 թվականի վերջին:

Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված 150,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհի միջոցներով 2025 թվականի ընթացքում իրականացվել են Դեբեդ գետի ջրաբանական հետազոտություններ, որոնց արդյունքների հիման վրա մշակվել և 2025 թվականի վերջին ավարտվել են Մ-6 ճանապարհի հետաղետային վերականգնման և բարելավման նախագծային աշխատանքները:

Դիլիջանի նոր թունելի կառուցման և Մ-6 ճանապարհի հետաղետային վերականգնման և բարելավման նախագծերը դեռևս պատրաստ չեն իրականացման, քանի որ հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստումն ու իրականացումը, այդ ոլորտում ընթացող օրենսդրական փոփոխություններով պայմանավորված, հետաձգվում են մինչև 2026 թվականի վերջ:

ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN	Բաղադրիչի անվանումը	2025թ. ընթացքում կատարված աշխատանքները, եվրո			2025թ. ընթացքում կատարված փաստացի վճարումները, եվրո		
		այդ թվում՝			այդ թվում՝	այդ թվում՝	այդ թվում՝
		Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին	Ընդամենը	Վարկի միջոցների հաշվին	ՀՀ բյուջեի հաշվին
	Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ-6, Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագիր, այդ թվում՝	**1,739,326.60**	**1,736,362.94**	**2,963.66**	**1,140,387.57**	**1,137,275.73**	**3,111.84**
1	Շինարարական աշխատանքներ, խորհրդատվություն և նախագծում	1,521,262.32	1,520,028.95	1,233.37	888,940.34	887,707.49	1,232.85
2	Պահպանման ծախսեր	218,064.28	216,333.99	1,730.29	251,447.23	249,568.24	1,878.99

Ծրագրի ֆինանսական հոսքերն ըստ տարիների՝ աճողական առ 31.12.2025թ.

4. ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական մասով. Հաշվետու ժամանակահատվածում ներքոնշյալ ծրագրերի իրականացման շրջանակներում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի բնապահպանության հարցերով մասնագետների կողմից իրականացվել են մշտադիտարկման շրջայցեր՝ բնապահպանական, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջների, ինչպես նաև բնապահպանական կառավարման պլաններով ամրագրված պահանջների համապատասխանության վերահսկողություն իրականացնելու, առկա վիճակն ուսումնասիրելու, խնդիրներին ծանոթանալու և լուծումներ առաջարկելու նպատակով: Ծրագրերն են՝

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8կմ և 34 կմ անավարտ հատվածներ,
- ՀՀՃՄՆԾ Տրանշ 3 Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածներ,
- ՀՀՃՄՆԾ Տրանշ 4 Քաջարան Ագարակ հատված,
- «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի» Թումանյան-Բագրատաշենի մաքսային անցակետ հատված:

Բոլոր ծրագրերն ունեն Շրջակա միջավայրի վրա ազդեցությանը և գնահատմանը վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ: Կախված շրջակա միջավայրի վրա ազդեցության չափից՝ ծրագրերից որոշներն ունեն նաև ՇՄԱԳ օրենքով նախատեսված փորձաքննական դրական եզրակացություն: Համապատասխան փաստաթղթերը հրապարակված են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Շինարարական հրապարակներում բնապահպանների կողմից դիտարկվում են շրջակա միջավայրի պահպանության պահանջների կատարման պայմանները (աշխատանքային անվտանգություն, հատուկ համազգեստ, ակնոցներ, սաղավարտ կրել,

առաջին բուժօգնության դեղարկղի, կրակմարիչների, սանիտարական պայմանների առկայություն և այլն): Հատուկ ուշադրություն է դարձվում շինարարական հրապարակում առողջության, անվտանգության ապահովմանը, շինհրապարակների կահավորմանը, աղմուկի և փոշու, թրթռման թույլատրելի մակարդակին, ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելմանը, բուսականության հատման և տնկման աշխատանքներին, թափոնների կուտակմանը և պարբերաբար հեռացմանը: Բացի այդ, ստուգվում է աշխատանքային ճամբարների, բետոնի և ասֆալտի գործարանների առկայությունը և վիճակը, հողային հանույթի տեղամասերը, հողի բերրի շերտի և հողային թափոնների տեղադրման վայրերը: Մոնիթորինգի է ենթարկվում նաև կազմված փաստաթղթերի որակը: Հայտնաբերված խնդիրների լուծման համար «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի համապատասխան մասնագետի կողմից առաջարկվում է ուղղիչ գործողությունների պլան, ինչի իրականացումը ևս ենթարկվում է մոնիթորինգի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև պլանավորվող ՀՀՃՄՆԾ Տրանշ 4 Սիսիան-Քաջարան և Քաջարանի թունելի նախապատրաստական աշխատանքների ուսումնասիրություն (բնապահպանական և մրցութային փաստաթղթերի վերանայում, հաշվետվությունների կազմում և այլն):

Բնապահպանական ազդեցությունների մասնագետները 2025 թվականին ակտիվ ներգրավվածություն են ունեցել վերոնշյալ ծրագրերի մրցույթային հայտերի գնահատման գործընթացներում:

Միևնույն ժամանակ, իրականացվել են նաև պլանավորվող Դիլիջանի թունելի կառուցման, Պուշկինի թունելի վերակառուցման և Մ6 միջպետական ճանապարհի հետաղետային վերականգնման ծրագրի բնապահպանական փաստաթղթերի և գնահատման հաշվետվությունների կազմման աշխատանքներ:

Սոցիալական պաշտպանության մասով.

ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ հատվածի ՀՕՏԾ իրականացում.

ՀՕՏԾ իրականացման աշխատանքներն ավարտված են:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 2, 34 կմ հատվածի դաշտամիջյան ճանապարհներ և մուտքեր դեպի հողամասեր.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՕՏԾ իրականացման աշխատանքներն ավարտվել են:

Նոր միջդաշտային ճանապարհներ և մուտքեր դեպի հողամասեր կառուցելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ իրականացվել են նախագծային փոփոխություններ, որի արդյունքում մոտ 132 հողամաս ազդեցության են ենթարկվել և ենթակա են օտարման: Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամը ձեռք է բերել Խորհրդատվական ծառայություններ՝ նոր նախագծով ազդակիր հողամասերի չափագրման, գնահատման և ՀՕՏԾ պատրաստման նպատակով:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 3, Թալին-Լանջիկ հատված (ԱԶԲ).

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են ՀՕՏԾ Լրացում 1-ի իրականացման աշխատանքները: Նշված փաստաթղթում ներառված՝ դեպի համայնքներ ու մասնավոր հողամասեր մուտքերի կառուցման նպատակով օտարվող 32 հողամասի օտարման գործընթացն ավարտվել է: Պատրաստվել է համապատասխանության հաշվետվություն և ներկայացվել ԱԶԲ հաստատմանը:

Նույն ՀՕՏԾ Լրացում 1-ը ներառում է նաև հաղորդակցուղիների տեղափոխման համար ազդակիր հողերի (շուրջ 300 հողամաս) վերաբերյալ տեղեկատվություն, սակայն ազդակիր հողամասերը հանրության գերակա շահ չեն ճանաչվել, քանի որ անհրաժեշտություն է առաջացել այս մասով ունենալ Հիմնադրամ/ՏԿԵՆ հստակ դիրքորոշումը՝ օտարման գործընթացը կազմակերպելու համար: 2024 թվականի 3-րդ եռամսյակում որոշում է կայացվել օտարել հաղորդակցուղիներով ազդակիր հողամասերը: Այս կապակցությամբ Ծրագրի Ինժեների պայմանագրի փոփոխություն է իրականացվել, ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է մոտ 25.000 ԱՄՆ դոլար տեխնիկական աջակցություն՝ ՀՕՏԾ Լրացում-1-ի գնահատված գույքերը վերագնահատելու համար խորհրդատուի ծառայություններ գնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են վերը նշված հողամասերի չափագրման և գնահատման աշխատանքները, ինչպես նաև պատրաստվել է Կառավարության որոշման նախագիծ՝ հողամասերը հանրության գերակա շահ ճանաչելու նպատակով:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 3, Լանջիկ-Գյումրի հատված (ԵՆԲ).

ՀՕՏԾ Լրացում 1-ի իրականացման աշխատանքներն ավարտված են:

ՀՕՏԾ Լրացում 2-ի իրականացման աշխատանքներն ավարտված են:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 4, Քաջարան-Ագարակ հատված.

ՀՕՏԾ իրականացման աշխատանքներն ավարտվել են:

Ծրագրի Լոտ 1 ենթահատված 1, 2, 3 և 4-ում ներառված հողամասերը տրամադրվել են Կապալառուին:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի շինարարության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել որոշ նախագծային փոփոխություններ, որի արդյունքում ազդեցության են ենթարկվել մոտ 88 հողամասեր, որոնց համար պատրաստվել է Կառավարության որոշում՝ դրանք հանրության գերակա շահ ճանաչելու նպատակով:

ՀՀՃՄՆԾ Տրանշ 4, Սիսիան-Քաջարան հատված.

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են ՀՕՏԾ իրականացման աշխատանքները: Խորհրդատուի կողմից ընդհանուր **583** հողամասերից **132** մասնավոր հողատարածքների համար կազմվել են օտարման պայմանագրերի նախագծեր, որոնք 2024 թվականի օգոստոսի 30-ին ծանուցվել են հողամասերի սեփականատերերին/համասեփականատերերին, իսկ **225** չգրանցված համայնքային հողամասերի մասով Ծրագրի Խորհրդատուն մեկնարկել է առաջին պետական գրանցման գործընթաց: Մնացած **226** հողամասերի մասով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից շրջանառվել է «ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N 981-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծ, քանի որ Որոշման կատարման ընթացքում (մինչև ազդակիր հողամասերի սեփականատերերին հողամասերի նկարագրության արձանագրությունների ծանուցումը) ազդակիր համայնքների կադաստրային քարտեզներում տեղի են ունեցել փոփոխություններ, որի արդյունքում որոշ հողատարածքների ազդակիր մակերեսները փոփոխվել են (մեծացել կամ փոքրացել են), իսկ որոշ հողատարածքներ ընդգրկվել են օտարման գոտում, ուստի անհրաժեշտություն է առաջացել 226 հողամասերի ազդակիր տարածքները ճանաչել հանրության գերակա շահ:

Նշվածով պայմանավորված՝ նախագծով առաջարկվել է Ծրագրի կարիքների համար 226 հողամասերի ազդակիր հատվածները կրկին հանրության գերակա շահ ճանաչել՝ վերջիններիս նկատմամբ սկսելով նոր օտարման գործընթաց, ինչը թույլ կտա ապահովել հողերի սեփականատերերի՝ օրենքով սահմանված իրավունքների իրականացման հնարավորությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՕՏԾ իրականացնող Խորհրդատուն առաջին պետական գրանցման է ներկայացրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը՝ հետագա օտարման գործընթացն ապահովելու համար, ինչպես նաև հանդիպումներ են իրականացվել ազդակիր համայնքների ղեկավարների հետ, սակայն օտարման պայմանագրեր կնքելու գործընթացը չի մեկնարկել, քանի որ իրականացման փուլում հայտնի է դարձել, որ ՀՕՏԾ պատրաստող Խորհրդատուի կողմից ներկայացված գնահատման հաշվետվություններում արձանագրվել են խախտումներ, որոնք բերել են գնահատված արժեքների անարժանահավատության, ինչի պատճառով Խորհրդատու կազմակերպության գնահատող մասնագետը զրկվել է գնահատողի որակավորման վկայականից: Միևնույն ժամանակ ՀՕՏԾ պատրաստող Խորհրդատուի կողմից ներկայացված ազդակիր գույքերի գնահատման փաթեթների մեջ հայտնաբերվել են այլ թերություններ, ինչի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել և ըստ անհրաժեշտության կատարել համապատասխան ուղղումներ: Ինչպես նաև, ՀՕՏԾ իրականացման ընթացքում Ծրագրի բողոքների լուծման մեխանիզմների (ԲԼՄ) շրջանակներում ազդեցության ենթարկված անձանց (ԱԵԱ) կողմից ներկայացվել են դիմում-բողոքներ, որով իրենց անհամաձայնությունն են հայտնել նկարագրության արձանագրությունների մեջ նշված ազդակիր գույքերի որակական և քանակական տվյալների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերի (շենք/շինությունների, բարելավումների) նոր գնահատում և չափագրման, ինչպես նաև թերությունների շտկման աշխատանքներ:

Այդ նպատակով, Հիմնադրամը ձեռք է բերել որակավորված գնահատող և չափագրման կազմակերպություն՝ ՀՕՏԾ շրջանակներում ազդակիր հողամասերը (շենք/շինությունները, բարելավումները) գնահատելու, գնահատման փաթեթներում առկա

թերությունները ուղղելու/վերացնելու համար, ինչպես նաև չափագրման և տեղազննման աշխատանքներ իրականացնելու համար:

Նշված Խորհրդատուները մեկնարկել են աշխատանքները հաշվետու ժամանակահատվածի 4-րդ եռամսյակում: Նույն եռամսյակում Հիմնադրամը կնքել է հողամասերի օտարման 45 պայմանագիր:

5. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆՃԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացմանն օժանդակություն: Նշված կանոնադրական նպատակից ելնելով՝ Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի ուսումնասիրություն. Ավտոմոբիլային ճանապարհների հետազոտման նպատակն է բացահայտել ասֆալտբետոնե ծածկի առկա թերությունները՝ վերականգնման ռազմավարություն մշակելու համար: Ասֆալտբետոնե ծածկի ուսումնասիրությունն իրականացվում է միջազգային անհարթության գործակցի IRI (մմ/մ) որոշման և ակնադիտական հետազոտման միջոցով:

Անհարթության գործակիցը (IRI) որոշվում է DYNATEST 5051 Mk-IV RSP համակարգի միջոցով, որը տեղակայված է RENAULT DUSTER մակնիշի ավտոմեքենայի վրա:

Ակնադիտական հետազոտման միջոցով որոշվում են ասֆալտբետոնե ծածկի ճաքերի (երկայնական (մ^2), լայնական (մ^2), ցանցաձև (մ^3), փոսերի (մ^3), մաշվածության մակերեսի (մ^2) և քայքայված եզրամասի (մ^2) ծավալները: Ակնադիտական հետազոտման և IRI (մմ/մ) միջազգային անհարթության գործակցի արդյունքները գրանցվում են հետազոտման ամփոփագրում: Անհրաժեշտության դեպքում կառուցվում են անհարթության, ճաքայնության, փոսայնության, կառուցվածքի փոփոխության և եզրամասի քայքայման գրաֆիկներ:

Իրականացվել են ճանապարհահատվածների ուսումնասիրման համար անհրաժեշտ նախապատրաստական և պլանավորման աշխատանքներ, ինչպես նաև պարբերաբար իրականացվել են միջազգային անհարթության գործակիցը չափող սարքավորումների կարգաբերման աշխատանքներ:

2025 թվականի ընթացքում ուսումնասիրվել են 1508.8 կմ ընդհանուր երկարությամբ (ներառյալ 118.6կմ I տեխնիկական կարգի) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհահատվածներ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 1132.2կմ և հանրապետական նշանակության՝ 376.6կմ:

2025թ.	Նախատեսված	Փաստացի
	1500կմ	1508.8կմ

Երթևեկության ինտենսիվության տվյալների հավաքագրում. Հայաստանի Հանրապետության 8 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 14 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Ստացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Կատարվել են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհներին տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և տրանսպորտային միջոցների ինտենսիվությունը չափող հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետու տարում մշտական տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 126 այցելություն 100 կետերում:

2025թ.	Նախատեսված	Փաստացի
հաշվեկետ	100	100
այցելություն	125	126

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը. Հիմնադրամի մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

• տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին (առկա և առցանց),

• մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին (առկա և առցանց):

2025 թվականի ընթացքում Հիմնադրամի մասնագետների կողմից հավաքագրված, ամփոփված և համադրված տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծությունների մոդելի միջոցով կազմվել են ուսումնասիրված ճանապարհահատվածների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնման ծրագրեր:

Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, գույքագրվել և տեսաձայնագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհահատվածներ՝ շուրջ 505.818 կմ ընդհանուր երկարությամբ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 65.768կմ, հանրապետական նշանակության՝ 84.85կմ և մարզային (տեղական) նշանակության՝ 355.2կմ ավտոմոբիլային ճանապարհ:

2025թ.	Նախատեսված	Փաստացի
	500կմ	505.8կմ

Իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալների ամփոփում և վերլուծություն, ինչպես նաև տվյալների շտեմարանի վարում:

Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում. Հաշվետու ժամանակահատվածում երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացման նպատակով կատարվել են տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքներ: Մասնավորապես.

1. Հիմնադրամում գործող ճանապարհային ցանցի կառավարման համակարգի (ՃՑԿՀ) ՃՏՊ շտեմարանի տվյալների գործիքը ցանկալի արդյունավետությամբ գործարկելու նպատակով տարեսկզբին հանդիպում է կազմակերպվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ճանապարհատրանսպորտային պատահարների հաշվառման գործընթացը կազմակերպող ղեկավար անձանց հետ:

Առաջարկություն է եղել ՀՀ ՆԳՆ կողմից վարվող էլեկտրոնային նախաքննության համակարգը հասանելի դարձնել ՏԿԵՆ-ին:

2. ՀՀ ՏԿԵ նախարարության ավտոճանապարհների և ճանապարհային կառույցների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում՝ նախագծերի ուսումնասիրման և ճանապարհների անվտանգության ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ինժեներների կողմից 17 նախագծերի վերաբերյալ տրվել են մասնագիտական եզրակացություններ, առաջարկություններ, որոնք Նախարարության միջոցով ներկայացվել են նախագծային կազմակերպություններին՝ նախագծերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

3. Ճանապարհային անվտանգության մակարդակի բարելավման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հանձնարարականների կատարման առընչությամբ ներկայացվել է մեկ առաջարկություն և կատարված աշխատանքների մեկ տեղեկանք:

4. Ստացված տեղեկությունների պարզաբանման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների առանձին հատվածներում կազմակերպվել են 33 ակնադիտական ուսումնասիրություններ: Արդյունքում, որոշ դեպքերում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման բարելավման ուղղությամբ կազմվել են 11 գծապատկերներ, ՏԿԵ նախարարությանը ներկայացվել են առաջարկություններ:

5. Երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման բարելավման նպատակով ներկայացվել են 76 կարծիքներ, այդ թվում՝ ոլորտին վերաբերող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մեջ փոփոխությունների և լրացումների վերաբերյալ, 51 պարզաբանումներ, 48 տեղեկատվություն, 72 առաջարկություն:

6. Ռազմավարության ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ և այլ թեմաներով կատարվել է 2 առաջարկ, իսկ 14 առաջարկներ ընդունվել են ի գիտություն:

7. Ծառայության հետ՝ գծապատկերների ներկայացմամբ կամ առանց դրանց, համաձայնեցվել են միջպետական նշանակության ավտոճանապարհների 15 կամուրջների հիմնանորոգման, նորոգման աշխատանքների ընթացքում ճանապարհային

երթևեկության անվտանգության ապահովման կամ այդ վայրերի շրջանցման խնդիրները և ներկայացվել են շինարարական կազմակերպություններին:

Այցելությունների ժամանակացույց

2025թ.	Նախատեսված	Փաստացի
այցելություն	15	28

6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում հիմնադրամի մասնագետների կողմից՝ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների պատշաճ սպասարկման ապահովման նպատակով, իրականացվել է ընդհանուր երկարությամբ 2650կմ ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և 3166կմ ընթացիկ ձմեռային պահպանման կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն:

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է ապրիլի 1-ից նոյեմբերի 15-ը: Ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածն է նոյեմբերի 16-ից մինչ հաջորդ տարվա մարտի 31-ը:

Ձմեռային պահպանման ժամանակահատվածում կազմակերպվել է շուրջօրյա հերթապահություն ավտոճանապարհների անցանելիության վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հերթապահությունն իրականացվել է հետևյալ գրաֆիկով՝

- աշխատանքային օրերին՝ ժամը 18^{00} մինչև հաջորդ օրվա 9^{00}
- ոչ աշխատանքային և տոնական օրերին՝ շուրջօրյա:

Հիմնադրամի կողմից իրականացվում է նաև պարսպող համակարգերի պահպանման (1040000 գծմ) և գծանշման (597075 մ^2) աշխատանքների նկատմամբ հսկողություն:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի ինժեներների կողմից միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվել է հսկողություն.

- **Թունելներ՝ 3 հատ**
- **Կամուրջներ՝ 5 հատ**

Լաբորատոր փորձաքննությունների իրականացում. Հիմնադրամը ՀՀ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի և/կամ ճանապարհների վերականգնման, պահպանման պատասխանատու ստորաբաժանման առանձին հանձնարարականների դեպքում իրականացնում է լաբորատոր փորձարկումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- իրականացվել են լաբորատոր սարքավորումների և գործիքների վիճակի կարգաբերում, մաքրում, թերությունների վերացում.
- խորհրդատվական աջակցություն է տրամադրվել շինարարական մի շարք կազմակերպությունների՝ ճանապարհաշինարարության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ: Շինարարության համար պարբերաբար իրականացվել է հսկողություն շինարարական նյութերի օգտագործման մասով:

Կատարվել է շինարարական նյութերի (խճի, կոպիճի, ավազի, բիտումի, հանքային փոշու և ա/բ-ի) 108 փորձարկում:

Փորձարկումների արդյունքները տրամադրվել են լիազոր մարմնին և համապատասխան կապալառուներին:

2025թ.	Նախատեսված (հատ)	Փաստացի (հատ)
Հանուկների հանում և տեղափոխում	85	96
Փորձարկումներ	100	108

Լաբորատորիայի կողմից իրականացվող գործառույթները նպաստել են ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և պատրաստի արտադրանքի պահանջվող որակի ապահովմանը:

7. ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հիմնադրամն ունի 156 հաստիքային միավոր:

Մեծապես գնահատելով և կարևորելով Հիմնադրամի աշխատակիցների մասնագիտական գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև կարևորելով Հիմնադրամի դերը վերջիններիս մասնագիտական կարողությունների հետևողական և շարունակական կատարելագործման հարցում՝ Հիմնադրամի կողմից մշտապես ապահովվում է համապատասխան աշխատակիցների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, սեմինարներին, աշխատաժողովներին և այլն:

2025 թվականի ընթացքում Հիմնադրամի աշխատակիցները մասնակցել են հետևյալ սեմինար-քննարկումներին ու աշխատաժողովներին.

1. Փետրվարի 21-ին Նիդեռլանդների ֆինանսների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպել է աշխատաժողով բյուջետային ծրագրերի կատարողականների թեմայով:

2. Մարտի 3-ին «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ-ն, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը և RED իտալական ընկերությունը, Ասիական զարգացման բանկի պատվիրակմամբ և ՀՀ Ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ, կազմակերպել են վավերացման աշխատաժողով՝ «Հայաստանի հանրային ենթակառուցվածքների սեյսմիկ անվտանգության բարելավման և կառավարման ֆինանսավորման ծրագրի մշակումը» նախագծի շրջանակներում:

Աշխատաժողովի նպատակն է եղել ներկայացնել և քննարկել նախագծի նախնական արդյունքները՝ վավերացնելու հիմնական եզրակացությունները, առաջարկությունները և ենթադրությունները, որոնք կապված են Հայաստանի ազգային սեյսմիկ ռիսկերի կառավարման և ֆինանսավորման առաջարկվող ծրագրի հետ: Միջոցառման ընթացքում ներկայացվել են Հայաստանի սեյսմիկ ռիսկերի գնահատման արդյունքները, որոնք ընդգրկում են առողջապահության, կրթության, ջրային, տրանսպորտային և վարչական ոլորտները, միջամտությունների առաջնահերթության շրջանակը, ինչպես նաև 20-ամյա

ռազմավարական ճանապարհային քարտեզ՝ ռիսկերի նվազեցման համար: Քննարկվել են քաղաքականության հիմնական առաջարկությունները, ինստիտուցիոնալ կարողությունների կարիքները և ծրագրի իրագործման ռազմավարությունները, որոնք կնպաստեն երկրի սեյսմիկ դիմակայունության ամրապնդմանը:

3. Մարտի 5-ին Ասիական զարգացման բանկը և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը իրականացրել են «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների ներքո» ավտոմոբիլային տրանսպորտի համար օդի աղտոտող նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների կարողությունների զարգացման աշխատաժողով: Սեմինարը ներկայացրել է նոր մեթոդոլոգիաներ՝ բարելավելու արտանետումների հաշվետվությունները և շրջակա միջավայրի գնահատումները՝ ամրապնդելով Հայաստանի կարողությունը՝ կատարելու կլիմայական իր պարտավորությունները: Կառավարության փորձագետները, ԾԻԳ-երը, այդ թվում և Հիմնադրամի բնապահպանության մասնագետները ուսումնասիրել են մոնիթորինգի, քաղաքականության մշակման և նախագծերի գնահատման ռազմավարություններ:

4. Մարտ ամսին հիմնադրամի փաստաթղթաշրջանառության բաժնի աշխատակիցները մասնակցել են Կառուցապատման թույլտվությունների միասնական էլեկտրոնային համակարգի գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով կազմակերպված «MulberryGroupware 2.0» համակարգի լրացուցիչ վերապատրաստմանը: Վերապատրաստումն առնչվել է կառուցապատման թույլտվությունների համակարգից ստացվող գործերի ընթացքի կազմակերպմանը:

5. Ապրիլի 3-11-ն ընկած ժամանակահատվածում Կայուն և ներառական ճանապարհային հատվածի 2-րդ ծրագրի մեկնարկային առաքելության շրջանակում Ասիական զարգացման բանկում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Նարեկ Զուլալյանը, Հիմնադրամի այլ պատասխանատուներ ԱԶԲ ներկայացուցիչների հետ քննարկել են երկկողմ համագործակցության շրջանակները, ինչպես նաև՝ առաջիկա ծրագրերը: ՀՀ ՏԿԵ նախարարությունը և Հիմնադրամը համատեղ առաքելություն են իրականացրել՝ խթանելու Հայաստանի տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը: Ուշադրության կենտրոնում է եղել Պուշկինի և Դիլիջանի թունելների

արդիականացումը՝ խելացի, ճկուն լուծումներով և մասնավոր հատվածի ներգրավվածության ուսումնասիրման վրա՝ երկարաժամկետ ազդեցության համար:

6. Մայիսի 19-21-ը Ղազախստանի Հանրապետությունում կայացել է ԱԶԲ «Կենտրոնական և Արևմտյան Ասիա, ծրագրի կատարողականի բարելավում գնահատման միջոցով» խորագրով աշխատաժողով, որի նպատակն է եղել ամրապնդել պորտֆելի որակը, նախագծերի պատրաստվածությունը և իրականացումը՝ գնահատումից քաղված դասերի միջոցով: Դեպքի մեթոդի կիրառմամբ մասնակիցները մեկնաբանել և կիրառել են գնահատման չափանիշները՝ ավարտված նախագծերի գնահատումները բարելավելու համար:

7. Մայիսի 15-17-ը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկն իրականացրել է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն է եղել արագացնել 2020 թվականից հետո «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» իրականացմանն ուղղված վաղ միջոցառումների նախապատրաստումն ու ընդունումը՝ ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելով «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ վերանայելու և համապատասխանեցնելու իրենց ազգային թիրախները, Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, քաղաքականության շրջանակները, մոնիթորինգի մեխանիզմները և ֆինանսավորումը «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի»:

8. Հունիսի 10-ին Նիդեռլանդների ֆինանսների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպել է աշխատաժողով բյուջետային ծրագրերի կատարողականների թեմայով՝ սույն թվականի փետրվարի 21-ին կայացած աշխատաժողովի շարունակականությունն ապահովելու նպատակով:

9. Հունիսի 3-ին Ասիական զարգացման բանկը Հայաստանում իրականացրել է աշխատաժողով՝ ուղղված «Անվտանգ համակարգի» մոտեցման կիրառմանը «Ճկուն և

ընդգրկուն ճանապարհային ոլորտի բարելավման ծրագիր II»-ի շրջանակում: Ճանապարհատրանսպորտային պատահարները Հայաստանում տարեկան հասնում են ՀՆԱ-ի գրեթե 6%-ին՝ կյանքեր խլելով ամեն 6 ժամը մեկ: 35-ից ավել մասնակիցներին են միացել նաև ԱԶԲ-ի փոխտնօրեն Լյուկ Ֆոչթմանը, ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը և Հիմնադրամի ծրագրերի ղեկավարներն ու ինժեներները:

10. Հունիսի 11-13-ը Ասիական զարգացման բանկը Դիլիջանում անցկացրել է ծրագրերի կառավարման վերապատրաստման աշխատաժողով: Վերջինս ուղղված է եղել ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի պատրաստվածության, գնումների, պայմանագրերի կառավարման և անվտանգության միջոցառումների բարելավմանը:

11. Հունիսի 20-ին ԱԶԲ փորձագետը անցկացրել է «Ճանապարհային ակտիվների կառավարման համար ճանապարհների պահպանման կատարողականի վրա հիմնված պայմանագրային մեթոդի կիրառումը» թեմայով աշխատաժողով, որի նպատակն է եղել քննարկել կատարողականի վրա հիմնված ճանապարհների պահպանման պայմանագրային մեթոդի կիրառման մարտահրավերները և առկա հայեցակարգերը:

12. Հուլիսի 3-ին Արևելյան գործընկերության Ճանապարհային անվտանգության դիտակետի (EaP RSO – Eastern Partnership Road Safety Observatory) կողմից կազմակերպվել է «Ճանապարհային անվտանգության աուդիտի մեխանիզմներ գործնական մասնագետների համար» թեմայով վերապատրաստման դասընթաց: Դասընթացի ընթացքում ներկայացվել են ճանապարհային անվտանգության ոլորտում ԵՄ փորձը և օրենսդրական պահանջները, աուդիտի իրականացման փուլերը, գործիքները և ազգային մակարդակում դրանց կիրառման հնարավոր մեխանիզմները:

13. Օգոստոսի 18-ին ԱԶԲ-ն և ՀՀ ՏԿԵ նախարարությունն անցկացրել են սեմինար՝ նվիրված տրանսպորտային ոլորտի կլիմայական և աղետների ռիսկերի վերլուծությանը: Քննարկվել են միջպետական ճանապարհների հիդրոլոգիական վտանգները և դրանց նվազեցման միջոցառումները: Ներկայացվել են ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր՝ տրանսպորտի ադապտացիոն պլան, բնական վտանգների համապետական գնահատում և Դեբեդ գետի հիդրոլոգիական մոդելավորում՝ օգնելու Մ6 ճանապարհի գրագետ վերականգնմանը:

14. Սեպտեմբերի 5-18-ն ընկած ժամանակահատվածում ՉԺՀ առևտրի նախարարության Միջազգային բիզնես պաշտոնյաների ակադեմիայի նախաձեռնությամբ Պեկին քաղաքում, հայկական կողմի առաջարկությամբ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվել է մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում երկկողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում անցկացվող «Փոխկապակցվածություն, միջազգային տրանսպորտ և լոգիստիկա» խորագրով դասընթաց:

15. Հոկտեմբերի 2-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից կազմակերպվել է «ՃՇՀԱՀ գիտահետազոտական կենտրոնի հնարավորությունները երթևեկության անվտանգության ոլորտի հետազոտություններում» թեմայով սեմինար:

16. Հոկտեմբերի 13-ին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ծրագրի ավարտական աշխատաժողովը: Ծրագրի նպատակն է եղել արագացնել 2020 թվականից հետո «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» իրականացմանն ուղղված վաղ միջոցառումների նախապատրաստումն ու ընդունումը՝ տրամադրելով ֆինանսական և տեխնիկական աջակցություն «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ իրենց ազգային թիրախների, Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի, քաղաքականության շրջանակների, մոնիթորինգի մեխանիզմների և ֆինանսավորման համակարգերի վերանայման և համապատասխանեցման նպատակով՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակին»: Ավարտական աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, ինչպես նաև՝ մշակված ռազմավարության ներքո սահմանված ազգային նպատակներն ու թիրախները: Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվել են նաև պանելային քննարկումներ՝ նվիրված

կենսաբազմազանության ռազմավարական պլանավորմանը և Հայաստանում COP17-ի նախապատրաստական գործընթացներին, ինչպես նաև՝ ոլորտային առաջնահերթություններին և համագործակցային մեխանիզմներին՝ կենսաբազմազանության պահպանության արդյունավետության ապահովման տեսանկյունից:

17. Հոկտեմբերի 11-24-ը Չինաստանի Ֆուժու քաղաքում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են թունելների ճարտարագիտության և տեխնոլոգիաների թեմայով սեմինարին: Այն նախատեսված է եղել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության (BRI) երկրների համար: Հիմնադրամի ներկայացուցիչները ծանոթացել են թունելների կառուցման, շահագործման և կառավարման միջազգային փորձին, նորագույն տեխնոլոգիաներին:

18. Հոկտեմբեր ամսին ՀՀ ՆԳՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում կազմակերպվել է ունկնդիրների պատրաստման ամենամյա դասընթաց՝ համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների պահանջների և ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշման:

19. Նոյեմբերի 5-ին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Համապարփակ աջակցության ծրագիր՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և 7-րդ ազգային զեկույցի մշակման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կազմակերպվել է աշխատաժողով: Ծրագրի նպատակն է եղել ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրել ՄԱԿ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրներին՝ իրենց ազգային թիրախների, կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և Կունմին-Մոնրեալի Կենսաբազմազանության գլոբալ շրջանակին համապատասխանեցման, ինչպես նաև՝ 7-րդ ազգային զեկույցի մշակման և ներկայացման համար:

20. Նոյեմբերի 12-14-ը Ֆրանսիական Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող Տեխնիկական աջակցության շրջանակներում

կազմակերպվել է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի մշակման և գնահատման ոլորտներում կարողությունների զարգացմանն ուղղված եռօրյա ուսումնական սեմինար: Սեմինարի նպատակն է եղել ամրապնդել աշխատակիցների կարողությունները՝ հիմնավոր ներդրումային հնարավորություններ բացահայտելու և բարձրորակ հանրային ներդրումային ծրագրեր պատրաստելու համար, ամրապնդել կարողությունը՝ արդյունավետորեն վերահսկելու ճանապարհային նախագծերի իրագործելիության ուսումնասիրությունները, ամրապնդել աշխատակիցների կարողությունները՝ ճանապարհային նախագծերի համար բարձրորակ կլիմայական վերլուծության անցկացման համար՝ համաձայն ներդրումային գնահատման ստանդարտների:

21. Նոյեմբերի 17-21-ը Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) աջակցությամբ տեղի է ունեցել Գետային ճարտարագիտություն «River Engineering Training» հնգօրյա մասնագիտական դասընթաց: Մասնակիցները ստացել են հիմնական պատկերացում այն մասին, թե ինչպես բացահայտել և քարտեզագրել լեռնային ջրային ավազանում հանդիպող հավանական հիդրոլոգիական վտանգների սցենարները՝ անհրաժեշտության դեպքում դրանց վերագրելով մոտավոր կրկնության պարբերականություններ: Քննարկվել են հետևյալ վտանգները կամ երևույթները՝ ջրհեղեղներ, նստվածքների շարժ, տեղափոխում և կուտակումներ, ներառյալ տեղային մաշվածությունը, ինչպես նաև՝ գետափի էրոզիան: Դասընթացի ընթացքում ներկայացվել են նաև նստվածքների տեղափոխման դինամիկան, ինչպես նաև՝ տեղային մաշվածության երևույթները:

22. Նոյեմբերի 26-27-ին ԱԶԲ-ն Երևանում իրականացրել է երկօրյա աշխատաժողով՝ ԱԶԲ ծրագրերում գենդերային ինտեգրումը ուժեղացնելու և Հայաստանի Գենդերային գնահատման նախնական տարբերակը հաստատելու նպատակով:

23. Նոյեմբերի 25-26-ը Սեուլ քաղաքում կայացել է Բազմակողմանի զարգացման բանկի նախագծերի հրապարակման միջոցառումը, որը կազմակերպվել է Կորեայի առևտրի և ներդրումների խթանման գործակալության կողմից: Միջոցառմանը մասնակցել են Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների

ներկայացուցիչները, ինչպես նաև՝ Հիմնադրամի ներկայացուցիչը: Միջոցառման մասնակցությունը հիանալի հնարավորություն է տվել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ներկայացմանը, ծրագիրը ֆինանսավորող դոնոր բանկերի հետ աշխատանքային քննարկմանը և Կորեական կազմակերպությունների հետաքրքրվածության բարձրացմանը, ինչպես նաև՝ թունելների շինարարության ոլորտում կորեական փորձին ծանոթացմանը:

24. Նոյեմբերի 20-ին Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի աջակցությամբ անցկացվել է «Տրանսպորտային անվտանգությունը կլիմայական մարտահրավերների պայմաններում. բեռնափոխադրումների անընդհատությունն ապահովելու և ջրհեղեղների հետևանքների վերացման համալիր ռազմավարություններ» թեմայով համաժողով:

25. Հոկտեմբերի 5-19-ն ընկած ժամանակահատվածում Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախաձեռնությամբ Ճապոնիայում կազմակերպվել է «Ավտոմոբիլային ճանապարհների կառավարում և պահպանություն» խորագրով դասընթաց:

26. 2024 թվականի մայիսի 25-26-ը Լոռու և Տավուշի մարզերի մի շարք համայնքներում տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակում Հայաստանին աջակցելու և աղետի հետևանքները նվազեցնելու նպատակով Շվեյցարիայի Համադաշնությունն՝ ի դեմս Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանության «Վաղ վերականգնում ջրհեղեղներից հետո 2024» ծրագրի շրջանակներում սույն թվականի դեկտեմբերի 15-19-ը Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) աջակցությամբ տեղի է ունեցել «Կամուրջների նախագծում» («Bridge design») թեմայով հնգօրյա մասնագիտական դասընթաց:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ 2025 թվականի ընթացքում ճանապարհային ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման նպատակով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աշխատակիցների շուրջ 70%-ը մասնակցել է վերապատրաստումների, դասընթացների, սեմինարների և աշխատաժողովների:

8. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականի ընթացքում Հիմնադրամը 40 քաղաքացիական գործերով դատական վարույթներին մասնակցել է որպես հայցվոր, պատասխանող կամ երրորդ անձ, որոնցից՝ 27 գործով որպես ՀՀ ՏԿԵ նախարարության ներկայացուցիչ:

Հիմնադրամը ներգրավված է եղել որպես տուժող 2 քրեական վարույթներում:

Գերակա շահ ճանաչված հողամասերի օտարման գործընթացի հետ կապված ընթացքի մեջ են եղել դատական գործեր տարբեր վարկային ծրագրերով, մասնավորապես.

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում (8կմ հատված) նախորդ տարվա գործերից ընթացքի մեջ է եղել 3 դատական գործ,

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 2 Ծրագրի շրջանակներում (34կմ հատված) նախորդ տարվա գործերից ընթացքի մեջ է եղել 3 դատական գործ,

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 3 Ծրագրի շրջանակներում (ԵՆԲ, Բենիամինի բնակավայրում մոտ 2 կմ հնագիտական վայրը շրջանցող հատված)՝ նախորդ տարվա գործերից ընթացքի մեջ է եղել 1 դատական գործ,

- ՀՀՃՄՆԾ Տրանշ 4 Ծրագրի շրջանակներում (Քաջարան-Ագարակ հատված) նախորդ տարվա գործերից ընթացքի մեջ է եղել 1 դատական գործ:

Հիմնադրամի կողմից մշակվել են ՀՀ կառավարության և Վարչապետի որոշումների թվով 10 նախագծեր: Ուսումնասիրվել և կարծիքներ են տրամադրվել շուրջ 15 ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ:

Մշակվել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ստորագրվող վարկային համաձայնագրերի, համագործացության համաձանագրերի նախապատրաստման, ստորագրման և վավերացման գործընթացներին առնչվող համապատասխան կառավարության որոշումներ, տեղեկանքներ, եզրակացություններ, ՍԴ ներկայացվող բացատրություններ:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն ակտիվորեն լուսաբանում է ճանապարհային ոլորտի ծրագրերը և միջոցառումները՝ սերտորեն համագործակցելով լրատվամիջոցների հետ, ինչպես նաև օգտագործելով հանրության հետ հաղորդակցության տարբեր գործիքներ:

2025 թվականի ընթացքում զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) **311** անդրադարձ են կատարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին, վերջինիս կողմից իրականացվող ծրագրերին, այդ թվում՝ **52-ը՝ հեռուստառեպորտաժի ձևաչափով**:

Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամն իր պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների և մամուլի հաղորդագրությունների միջոցով հանրությանը և ԶԼՄ-ներին տրամադրել է շուրջ **450** ծանուցում ճանապարհների անցանելիության վերաբերյալ:

Հրապարակվել է **112** հայտարարություն ճանապարհային ոլորտի մրցույթների, հանրային լսումների և այլ թեմաների վերաբերյալ:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի էջը Facebook սոցիալական ցանցում 2025 թվականի ընթացքում ունեցել է **27.832.390 դիտում**:

Հիմնադրամը պատասխանել է լրագրողների՝ «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով, էլեկտրոնային փոստով ստացված և բանավոր հարցումներին, ինչպես նաև քաղաքացիների՝ Հիմնադրամի սոցհարթակներին ուղղված հարցադրումներին: